COVID-19

նոր կորոնավիրուսային հիվանդության ազդեցությունը կալանավորված և դատապարտված կանանց վրա

COVID-19

նոր կորոնավիրուսային հիվանդության ազդեցությունը կալանավորված և դատապարտված կանանց վրա

© «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ Երևան, 2024

«COVID-19 նոր կորոնավիրուսային հիվանդության ազդեցությունը կալանավորված և դատապարտված կանանց վրա» հետազոտությունը կատարել է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն՝ Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ՝ Equality Fund-ի ֆինանսական հովանավորությամբ:

Հետազոտության մեջ տեղ գտած տեսակետները պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել Հայաստանում կանանց հիմնադրամի տեսակետների հետ:

Հետազոտական աշխատանքներին մասնակցել են Ամանդա Սարգսյանը, Էդգար Մանուչարյանը և Լիլիթ Մուրադյանը:

Ձեկույցը կազմել է Նարե Հովհաննիսյանը:

Բովանդակություն

Հապավումների ցանկ 5

Ներածություն 6

Մեթոդաբանություն 8

Բուժանձնակազմը և աշխատանքի 10

պայմանները..... 10

Համավարակի կանխարգելումը և բուժումն «Աբովյան» ՔԿՀ-ում 12

Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումն
«Աբովյան» ՔԿՀ-ում 20

«Աբովյան» ՔԿՀ-ի աշխատակազմը և աշխատանքի պայմանները 26

Կանանց տեղամասի և մեկուսարանի մասնաշենքեր..... 28

Կարանտինային խցեր..... 30

Քննչական սենյակներ..... 32

Ազատազրկված օտարերկրացի կանայք 33

Հոգեբանական աշխատանքների
կազմակերպումը 34

Անվանական հաշվառման, զննության և խուզարկության
կազմակերպումը 37

Փոխադրումների կազմակերպումը..... 38

Սննդի ապահովումը 39

Լոգանքի և հիգիենայի ապահովումը 43

Արտաքին աշխարհի հետ կապը 45

Զբոսանքը 50

Գնումներն «Աբովյան» ՔԿՀ-ին կից գործող կրպակից..... 52

Աշխատանքը, կրթությունը և զբաղվածությունը 53

Մարզասրահից և գրադարանից օգտվելը 58

Ինքնավնասում կատարելու և
հացադուլ հայտարարելու դեպքերը 59

Կարգապահական տույժի և խրախուսանքի միջոցները 60

Քրեակատարողական հիմնարկների վերահսկողությունը և
մշտադիտարկումը..... 61

Աջակցությունն ազատազրկման
վայրերից վերադարձած անձանց..... 63
Համավարակի կանխարգելումը
Պրոբացիայի ծառայությունում..... 65
Եզրակացություն 71
Առաջարկություններ..... 74
Հիմնական գրականության ցանկ..... 79

Հապավումների ցանկ

ԱՁ	անհատ ձեռներեց
ԱՆ	արդարադատության նախարարություն
ԲԲԸ	բաց բաժնետիրական ընկերություն
ԲԿ	բժշկական կենտրոն
ԷԿԳ	Էլեկտրասրտագրություն
Լ	լիտր
կգ	կիլոգրամ
Հասարակական դիտորդների խումբ	ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարասարակական դիտորդների խումբ
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՌՎ	հակառետրովիրուսային
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՊՇՌ	պոլիմերազային շղթայական ռեակցիա
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն
ՔԿՀ	քրեակատարողական հիմնարկ

Ներածություն

Հաշվի առնելով ամբողջ աշխարհում և Հայաստանում COVID-19 նոր կորոնավիրուսային հիվանդության (այսուհետ՝ կորոնավիրուսային հիվանդություն) տարածման դեպքերը և այն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից համավարակ որակելու հանգամանքը՝ Հայաստանի կառավարությունը 2020 թվականի մարտի 16-ից 2020 թվականի սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում երկրում արտակարգ դրություն է հայտարարել: Կառավարության մեկ այլ որոշմամբ երկրի ամբողջ տարածքում 2020 թվականի սեպտեմբերի 11-ից 2022 թվականի հունիսի 20-ը ներառյալ կարանտին է սահմանվել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակը մնում է լարված[1]:

Ազատազրկված անձինք ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում խոցելի են համավարակի նկատմամբ, քանի որ քրեակատարողական հիմնարկներում վարակի բռնկման և տարածման հավանականությունն ավելի մեծ է: Համավարակի ներթափանցմանը և տարածմանը նպաստում են վերջիններիս սանիտարահիգիենիկ և կենցաղային ոչ բավարար պայմանները, ազատազրկված անձանց թույլ իմունային համակարգը, առողջապահական ծառայությունների տրամադրման հապաղումը, սոցիալական հեռավորության պահպանման անհնարինությունը, անձնական տարածքի բացակայությունը, գերբնակեցումը և այլն: Ազատազրկված անձանց շրջանում համավարակի նկատմամբ առավել խոցելի են կանայք, քանի որ կիրառված սահմանափակումները հանգեցրել են նրանց կարիքների կրկնակի անտեսմանը: Անբարենպաստ վիճակում են հայտնվել նաև այն կանայք, ովքեր ազատ են արձակվել քրեակատարողական հիմնարկից կամ պատիժ են կրել Պրոբացիայի ծառայությունում, քանի որ գործազրկությանն ավելացել է խտրականության և բռնության ենթարկվելու հավանականությունը:

Ուսումնասիրության նպատակն է խթանել կալանավորված և դատապարտված կանանց իրավունքների պաշտպանությունը համավարակի ժամանակ և բարձրացնել նրանց վերաբերյալ հանրային

1.«ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշում: «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշում:

իրազեկվածությունը[2]: Ուսումնասիրության խնդիրներն են.

- Ուսումնասիրել և փաստագրել կալանավորված և դատապարտված կանանց կարիքները և իրավունքների խախտումները համավարակի ժամանակ:
- Ուսումնասիրել և վերլուծել նրանց շրջանում համավարակի կանխարգելմանը, խնամքին և բուժմանն ուղղված ներպետական օրենսդրությունը, միջազգային չափորոշիչները և ուղեցույցերը:
- Բացահայտել ներպետական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բացերը:
- Մշակել կալանավորված և դատապարտված կանանց վիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Բացահայտված հիմնախնդիրների հանրայնացման և ջատագովության նպատակով 2022 թվականին կազմակերպվել է 2 մամուլի ասուլիս, 2023 թվականին՝ 1 ամփոփիչ համաժողով: Նախքան հրապարակելը տեղի են ունեցել զեկույցի փակ աշխատանքային քննարկումներ շահագրգիռ պետական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հայաստանում նմանատիպ ուսումնասիրություն դեռևս չի իրականացվել: Այսինքն՝ զեկույցը հիմնախնդրի ուսումնասիրության առաջին փորձն է Հայաստանում: Այն հասցեագրվում է որոշում կայացնող և քաղաքականություն մշակող այն կառույցներին, որոնք պատասխանատու են Հայաստանի քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումների, ազատազրկված անձանց և պրոբացիայի շահառուների, մասնավորապես կանանց վիճակի բարելավման և իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման համար: Ակնկալում ենք, որ զեկույցում վերհանված հիմնախնդիրները կնպաստեն նշված խմբի կանանց նկատմամբ հանրության, որոշում կայացնող և քաղաքականություն մշակող կառույցների զգայունության բարձրացմանը և վերաբերմունքի փոփոխությանը, ինչը կարևոր նախապայման է համարժեք բարեփոխումների իրականացման համար:

2.Տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցները չեն դիտարկվել, քանի որ դրանք Պրոբացիայի ծառայության կողմից սկսել են կիրառվել 2023 թվականի հունվարի 1-ից: Դիտարկվել են ազատազրկում, տուգանք և հանրային աշխատանքներ պատժատեսակները:

Մեթոդաբանություն

Հետազոտական աշխատանքները կատարվել են 2022, ամփոփվել՝ 2023 թվականին: Զեկույցում դիտարկվել են համավարակի կանխարգելման նպատակով 2020 և 2021 թվականներին կիրառված սահմանափակումները և դրանց հետևանքով ստեղծված իրավիճակը: Ուսումնասիրվել է քրեակատարողական և պրոբացիայի համակարգում համավարակի կանխարգելմանը, խնամքին և բուժմանն ուղղված միջազգային և ներպետական ավելի քան 200 փաստաթուղթ՝ ներառյալ իրավական ակտեր, հետազոտություններ, մամուլի հրապարակումներ, ուղեցույցներ և այլն: Նշված փաստաթղթերի հիման վրա մշակվել են դիտարկման քարտեր և խորին հարցազրույցի հարցաշարեր:

Մշտադիտարկման 3 այց է կատարվել «Աբովյան» ՔԿՀ: Առաջին այցելությունը կատարվել է 2022 թվականի հունիսի 23-ին, որի ժամանակ խորին հարցազրույցներ են անցկացվել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման ղեկավարի և գինեկոլոգի հետ: Երկրորդ այցելությունը կատարվել է 2022 թվականի հունիսի 24-ին, որի ժամանակ մշտադիտարկում է կատարվել «Աբովյան» ՔԿՀ-ում: Դիտարկվել են հսկիչ-անցագրային կետը, հանձնուքի ընդունման, տեսակապի, մանկական, կարճատև և երկարատև տեսակցության, ինչպես նաև քնչական սենյակները, ատամնաբուժարանը, գինեկոլոգիական միջամտության սենյակը, աշխատանքային գոտիները, մեկուսարանի և կանանց տեղամասի մասնաշենքերը՝ ներառյալ զբոսախցերը, խցերը, կացարանները, լոգարանները, սանհանգույցները, աշխատասենյակները, բժշկական սպասարկման և ուսումնական սենյակները[3]: Խորին հարցազրույց է անցկացվել ազատազրկման դատապարտված 3 և կալանավոր-

3.Մեկուսարանը խցային տեսակի շենք է, նախատեսված է կալանավորված և ազատազրկման դատապարտված անչափահասների, կալանավորված, բարձր անվտանգության գոտու մեղմ և խիստ, ինչպես նաև միջին անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանանց համար: Խցային տեսակի 1 այլ շենք 2023 թվականից նախատեսվել է կալանավորված, բարձր անվտանգության գոտու մեղմ և խիստ, ինչպես նաև միջին անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող այն կանանց համար, ովքեր իրենց մոտ ունեն մանկահասակ երեխա: Կանանց տեղամասը կացարանային տեսակի շենք է, նախատեսված է միջին անվտանգության գոտու մեղմ և ցածր անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանանց համար: Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ նրանց հատկացվել է ամենամեծ սենյակը: Մեկական սենյակներ են առանձնացված եղել իր մոտ մանկահասակ երեխա ունեցող և առողջական խնդիրներ ունեցող կնոջ համար: Կացարանային տեսակի մյուս շենքը նախատեսված է ցածր անվտանգության գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող կանանց համար: Մշտադիտարկման այցի նկարները հասանելի են զեկույցի էլեկտրոնային տարբերակում:

վածՀ 2 կնոջ հետ: Երրորդ այցելությունը կատարվել է 2022 թվականի օգոստոսի 12-ին, որի ժամանակ խորին հարցազրույց է անցկացվել «Աբովյան» ՔԿՀ-ի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետի հետ:

Հիմնախնդրի վերաբերյալ շահագրգիռ կողմերի կարծիքը և առաջարկություններն ուսումնասիրելու նպատակով 2022 թվականի հունիս-օգոստոս ամիսներին 1-ական խորին հարցազրույցներ են անցկացվել Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի պետի տեղակալի, Պրոբացիայի 3 կին շահառուի, «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալի, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ամբուլատոր կլինիկայի ղեկավարի, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետի, Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության գլխավոր մասնագետի հետ: «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժշկական օգնության կազմակերպման, սպասարկման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի անցկացվել է 2 խորին հարցազրույց:

Իրավիճակը համակողմանիորեն վերլուծելու և գնահատելու նպատակով տեղեկատվություն ստանալու վերաբերյալ գրավոր հարցումներ են ուղարկվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Առողջապահության նախարարությանը, Արդարադատության նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը, Պրոբացիայի ծառայությանը, Միասնական սոցիալական ծառայությանը[4], «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին, Գլխավոր դատախազությանը, Ոստիկանությանը, Քննչական կոմիտեին, Հանրային պաշտպանի գրասենյակին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին և Հասարակական դիտորդների խմբին: Օգտագործվել են նաև հիմնախնդրի վերաբերյալ նախորդ տարիներին ուղարկված գրավոր հարցումները և դրանց պատասխանները[5]:

4.ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 251-Ն որոշմամբ 2021 թվականի ապրիլի 1-ից դադարեցվել է սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների գործունեությունը և սոցիալական ապահովության ծառայությունն անվանափոխվել է Միասնական սոցիալական ծառայություն:

5.Գրությունների պատասխանները հասանելի են կից պանակում՝ Հարցումների պատասխաններ:

Բուժանձնակազմը և աշխատանքի պայմանները

Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ բուժանձնակազմը պարբերաբար մասնակցել է համավարակի կանխարգելման և կառավարման վերաբերյալ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ հեռավար տարբերակով, որոնց բովանդակությունը մշակվել է Ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից[6]: Նրանց շրջանում կատարվել են իրազեկման և ջերմաչափման աշխատանքներ[7]: Համավարակի կանխարգելմանն առնչվող գործառույթների թերացման պատճառով բուժանձնակազմի շրջանում աշխատանքից հեռացման կամ ազատման դեպքեր չեն արձանագրվել, իսկ նշված գործառույթների արդյունավետ կատարման համար համապատասխան աշխատակիցներին տրվել են պարգևավճարներ: Սակայն մտահոգիչ է այն, որ «Աբովյան» ՔԿՀ-ի բուժանձնակազմին պարգևավճարներ կամ հավելավճարներ չեն տրամադրվել:

Մենք ջերմաչափել ենք բուժանձնակազմին և ազատազրկված անձանց: Եթե մեր աշխատակիցը ջերմել է, ուղարկել ենք տեղամասային պոլիկլինիկա՝ թեստավորման: Յուրաքանչյուր աշխատակից 8-9 թեմայով վերապատրաստման է մասնակցել, ընդհուպ՝ նմուշառման: Ամենօրյա աշխատանքին զուգահեռ բուժքույրերը կատարել են նաև ջերմող և կոնտակտավոր անձանց ջերմության և սատուրացիայի չափում օրվա մեջ 4 անգամ, թեստի անցկացում 3 օրը 1 անգամ: Աշխատավարձի բարձրացում չի եղել, բայց հավելյալ աշխատանքը գնահատվել է: Ծանրաբեռնված ստորաբաժանումներին կենտրոնի կողմից պարգևավճարներ են տրվել: Թեև եթե որոշ ստորաբաժանումների բուժանձնակազմի թիվը շատ լիներ, նրանց ծանրաբեռնվածությունը քիչ կլիներ:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

6.2020 թվականի հունիսի 2-ին «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ և Ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպել է «Կորոնավիրուսի կանխարգելումը և վերահսկողությունը քրեակատարողական հիմնարկներում» թեմայով հեռավար դասընթաց, որին մասնակցել է «Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման բուժանձնակազմը: Այն ներառել է թեմաներ համավարակի կանխարգելման, անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման, ձեռքերի հիգիենայի, ախտահանման և վարակիչ թափոնների կառավարման վերաբերյալ:

7.Ջերմաչափումը կատարվել է «ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ թիվ 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով սահմանված դրույթների համաձայն:

Հիմնարկի ստորաբաժանման բոլոր 8 հաստիքները համալրված են: Աշխատակիցներն 9-ն են՝ ստորաբաժանման ղեկավար (1 հաստիք՝ 1 աշխատակից), գինեկոլոգ (1 հաստիք՝ 1 աշխատակից), հոգեբույժ (0,5 հաստիք՝ 1 աշխատակից), ատամնաբույժ (0,5 հաստիք՝ 1 աշխատակից), բուժքույր (5 հաստիք՝ 5 աշխատակից)[8]: Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ ստորաբաժանման աշխատանքը ծանրաբեռնված է: Պատճառն այն է, որ նույն բուժանձնակազմը սպասարկում է ազատազրկված կանանց և անչափահասներին, որոնց առողջական խնդիրները տարբեր են: Բացի այդ, հերթափոխի բուժքույրը միաժամանակ սպասարկում է մեկուսարանի և կանանց տեղամասի մասնաշենքերը, ինչը բժշկական ծառայությունը դժվար հասանելի է դարձնում երեկոյան կամ գիշերային ժամերին, քանի որ մասնաշենքից մասնաշենք տեղափոխվելը որոշակի ժամանակ է պահանջում:

Բուժքույրերը 5-ն են, 1-ը ցերեկային է, 4-ը՝ շուրջօրյա: Նրանք 24 ժամ հերթապահում են: Մեկ բուժքույրը 24 ժամ բնակելի գոտում է, 2 մասնաշենք է սպասարկում մեկուսարան և կանանց տեղամաս: Երբ հերթափոխի բուժքույրերից 1-ն արձակուրդում է լինում, մյուսները չեն կարող 2 օրը 1 հերթապահել: Պետք է 3 օր հանգստանան: Արձակուրդում գտնվող բուժքույրին ցերեկային բուժքույրն է փոխարինում, սակայն վերջինս գիշերային հերթապահության համար չի վարձատրվում և չի հասցնում հանգստանալ:

«Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման ներկայացուցիչ

Բուժքույրերը քիչ են: Ասենք՝ ես վատ եմ: Զանգում եմ, ասում եմ վատ եմ, սրտի, ճնշման խնդիր ունեմ, ուզում եմ օգնություն ցույց տաք: Բուժքույրը մեկուսարանում է, ընդեղ խնդիր կա: Մինչև Էնտեղից գալիս է ստեղ, ժամեր է տևում: Կամ պիտի Էնտեղ թողնեն, վազեն Էստեղ, կամ Էստեղ պիտի թողնեն, վազեն Էնտեղ: Գոնե 2 բուժքույր լինի, 1-ը՝ ստեղ, մյուսը՝ Էնտեղ:

Կին դատապարտյալ, կանանց տեղամասի մասնաշենք

Մշտադիտարկման այցի ժամանակ նաև արձանագրել ենք, որ մեկուսարանի մասնաշենքի բժշկական սպասարկման սենյակը, որը տեղակայված է առաջին հարկում, անմխիթար վիճակում է: Գույքի՝ ոչ բարվոք վիճակում լինելու հետ մեկտեղ նկատել ենք, որ խոնավության պատճառով սենյակի պատերի և առաստաղի ներկաշերտը տեղ-

8.Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ կենտրոնի հաստիքացուցակը կազմվում է Առողջապահության նախարարի հրամանով: Միջին բուժանձնակազմի հերթապահությունների ժամանակացույցը կազմվում է ստորաբաժանման ղեկավարի հրամանով:

տեղ թափված է: Նույն անմխիթար վիճակում էր նաև ներկառուցված սանհանգույցը, որն ապահովված էր հոսող ջրով և լվացարանով: Ճիշտ է, սենյակում տեղադրված է ջեռուցման համակարգ, սակայն օդափոխությունը պատուհանը բացելու միջոցով է կատարվում, ինչը ցուրտ եղանակներին կարող է հիվանդացության պատճառ դառնալ: 2023 թվականին ստորաբաժանմանը հատկացվել է ավելի բարվոք պայմաններով սենյակ, որն ապահովված է մշտական հոսող սառը ջրով, սակայն տեղեկացել ենք, որ այն չունի ներկառուցված սանհանգույց: Կանանց տեղամասի առաջին հարկում առանձնացված է բժշկական սպասարկման բաժանմունք՝ 3 աշխատասենյակով, որոնցից 1-ը նախատեսված է բժշկի ընդունելության, մյուսը՝ բժշկական միջամտությունների, երրորդը՝ բուժանձնակազմի հանգստի համար: Սենյակները համեմատաբար բարվոք վիճակում են, սակայն արձանագրել ենք, որ դրանք ապահովված չեն մշտական հոսող ջրով և սանհանգույցով: Բուժանձնակազմն օգտվում է մասնաշենքի առաջին հարկի սանհանգույցից և լվացարանից: Նաև նկատել ենք, որ բուժանձնակազմն ապահովված չէ ընդմիջման, մեկուսարանի մասնաշենքում՝ նաև հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններով: Նշված խնդիրները մտահոգիչ են համավարակի ժամանակ բուժանձնակազմի առողջության պահպանման և անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:

Համավարակի կանխարգելումը և բուժումն «Աբովյան» ՔԿՀ-ում

Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում Քրեակատարողական բժշկության կենտրոնի կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ ազատազրկված անձանց շրջանում համավարակի տարածումը կանխարգելելու ուղղությամբ: Կենտրոնի տնօրենի՝ 2020 թվականի հունվարի 10-ի թիվ 3-Լ հրամանով հրահանգվել է գրիպի և սուր շնչառական վիրուսային վարակների կանխարգելման նպատակով սահմանափակել ազատազրկված անձանց շփումն ակնհայտ հիվանդ այցելուների հետ, խստացնել հսկողությունը սանիտարական և հակահամաճարակային նորմերի պահպանման նկատմամբ: Հանձ-

նարարվել է վիրուսային վարակների մասին բժշկահիգիենիկ գիտելիքներ տարածել և առողջ ապրելակերպի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ կատարել: Դեղորայքային ապահովման պատասխանատուին հանձնարարվել է ստորաբաժանումներն ապահովել անհրաժեշտ ախտահանող նյութերով, դեղերով և այլ պարագաներով: 2020 թվականի մարտի 13-ին ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է առավելագույնս սահմանափակել առողջական խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց ոչ հրատապ և պլանային տեղափոխումը կամ ուղեգրումն առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ կամ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ՝ դրանք իրականացնելով միայն անհետաձգելի սուր պաթոլոգիաների և ազատազրկված անձանց կյանքին սպառնացող վտանգի դեպքերում: Ստորաբաժանումներում մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը դադարեցվել է ատամնաբուժական ծառայությունը: Մատուցվել է միայն անհետաձգելի ատամնաբուժական օգնություն: Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված անձանց շրջանում բուժանձնակազմի կողմից կատարվել են համավարակի և դրա կանխարգելմանն ուղղված իրազեկման աշխատանքներ, տրամադրվել են տեղեկատվական թերթիկներ և պաստառներ[9]: Բժշկական սպասարկում իրականացնող տարածքներն ախտահանվել են Առողջապահության նախարարության կողմից սահմանված ժամկետներում և ախտահանող նյութերով[10]: Պատերին ամրացվել են ախտահանող նյութերով լի տարաներ՝ ազատազրկված անձանց ձեռքերի ախտահանման համար: Ստորաբաժանումները համալրվել են համավարակի կանխարգելման և բուժման համար անհրաժեշտ պաշտպանիչ միջոցներով, բժշկական նյութերով և պարագաներով՝ ռապիդ թեստեր, ցողիչ-դիսպենսերներ, ալկոգել, արտահագուստներ, ձեռնոցներ, դիմակներ և շնչադիմակներ, սպիրտ, թթվածնի գեներատորներ, սատուրոմետրեր, էլեկտրոնային հեռահար և սնդիկով ջերմաչափեր,

9.«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ազատազրկված կանանց համար Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ 2020 թվականի օգոստոսի 14-ին կազմակերպել է «COVID-19 նոր կորոնավիրուսային հիվանդության կանխարգելում» թեմայով հեռավար դասընթաց, որի նպատակն էր ազատազրկված կանանց իրազեկել համավարակի ախտանշանների, տարածման և այլ առանձնահատկությունների, ախտահանող նյութերի, անհատական պաշտպանիչ միջոցների և դրանց կիրառման վերաբերյալ: Այն կազմվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության չափանիշների ու ուղեցույցների հիման վրա:

10.«ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ թիվ 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրաման:

տարածքի ախտահանման և մաքրման համար նախատեսված դույլեր, որոնք ըստ անհրաժեշտության բաշխվել են ստորաբաժանումների միջև: Նշված կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցառումներն իրականացվել են պետական բյուջեի միջոցներով[11], ինչպես նաև Առողջապահության նախարարության, Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնի, Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում համավարակի կանխարգելման և իրազեկման աշխատանքները ստորաբաժանման կողմից կատարվել են նույն սկզբունքով:

Չնայած երկրում պաշտպանիչ և ախտահանող միջոցների սղությանը՝ ստորաբաժանումներն ապահովված են եղել անհրաժեշտ միջոցներով և հեռահար ջերմաչափերով: Հիմնարկն իր միջոցներով ձեռք էր բերել, բայց մենք ևս մեր կողմից ձեռք բերված պաշտպանիչ միջոցներից և ախտահանող նյութերից տրամադրել ենք: Օրինակ, տեսակցության եկած անձանց պետք է քրեակատարողական հիմնարկը դիմակներ տրամադրեր, բայց մենք ևս տվել ենք, քանի որ հետևանքները մենք էինք կրելու:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Ստորաբաժանումը համալրված է եղել բոլոր պարագաներով, որպեսզի կարողանանք կատարել ախտահանումները: Այն քանակն է տրամադրվել, որ հիմնարկին նույնպես ապահովենք: Բուժաշխատողների կողմից կատարվել է ընդհանուր տարածքի, խցերի և դրանց սանհանգույցների, դռների, բոլոր հարթ մակերեսների ախտահանում: Նախատեսված կարգով մշակումներ են կատարվել: Առավոտյան և երեկոյան համայցերի ժամանակ կատարվել են ջերմաչափումներ:

«Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման ներկայացուցիչ

Ըստ Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության՝ ազատազրկված անձանց շրջանում համավարակին բնորոշ ախտանշանների վաղ հայտնաբերման նպատակով կատարվել են ջերմաչափման աշխատանքներ: Ջերմող անձինք մեկուսացվել և բժշկական հսկողության տակ են վերցվել՝ վերջիններիս շփումն ազատազրկված մյուս անձանց հետ սահմանափակելու նպատակով: Մեկուսացումը կատարվել է բժշկական սպասարկման համար նա-

11.Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ կանխարգելման աշխատանքները կազմակերպելու նպատակով կենտրոնին 2022 թվականի մարտի 19-ին տրամադրվել է լրացուցիչ 2 միլիոն դրամ: Գնումների գործընթացը կազմակերպվել է ինչպես մրցութային, այնպես էլ անհրաժեշտությունից ելնելով՝ հրատապ՝ 1 անձից գնման եղանակով:

խատեսված տարածքներում: Այն քրեակատարողական հիմնարկնե-ում, որոնց ստորաբաժանումները չունեն նման հնարավորություն, մեկուսացումն ապահովվել է խցային պայմաններում: Ըստ Արդարա-դատության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ հա-մավարակին բնորոշ ախտանշաններ ունեցող ազատազրկված ան-ձանց մեկուսացնելու նպատակով քրեակատարողական հիմնարկնե-ում առանձնացվել են առնվազն 1-ական խցեր: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ կանանց և անչափահասների մեկուսացումն անհրաժեշտության դեպքում ապահովվել է մեկուսա-րանի մասնաշենքի առաջին հարկի խցերում, որոնց պայմանները մտահոգիչ են համավարակի ժամանակ նրանց առողջության պահ-պանման և անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից: Կին դատապարտյալների մեկուսացումն ապահովելու տեսանկյունից մտահոգության տեղիք է տալիս կանանց տեղամասի մասնաշեն-քը: Արձանագրել ենք, որ այնտեղ համապատասխան կացարան չի առանձնացվել, իսկ բուժսպասարկման համար նախատեսված սեն-յակները չունեն նման հնարավորություն:

Մեկուսացումները կատարվել են բժշկական ցուցումով: Մեկուսացումը հիմնարկում ենք ապահովել: Ոչ թե հիվանդներին ենք մեկուսացրել, այլ ջերմողներին, որոնց մոտ ոչ ռապիդով, ոչ ՊՇՌ-ով Covid չի հայտնաբերվել: Ստորաբաժանման ղեկավարը տվյալ քրեակատարողական հիմնարկի պետի անունով միջնորդագիր է գրել, անձին տեղափոխել ենք բուժմաս: Եթե տվյալ հիմնարկի բուժմասում մեկուսացնելու հնարա-վորություն չի եղել, մեկուսացրել ենք խցերում:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Ըստ Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տե-ղեկատվության՝ արյունային և քիթ-ըմպանային եղանակով ռապիդ թեստավորումը կատարվել է քրեակատարողական հիմնարկ յուրա-քանչյուր մուտքի դեպքում, բուժանձնակազմին գանգատներով դի-մած, ինչպես նաև հայտնաբերված դրական դեպքի հետ կոնտակտ ունեցած ազատազրկված անձանց շրջանում: Թեստավորումը կա-տարվել է բուժանձնակազմի կողմից, քրեակատարողական հիմնար-կի պայմաններում և անվճար հիմունքներով: Անհրաժեշտ քանակով ռապիդ թեստերը կենտրոնին տրամադրել է Առողջապահության նա-խարարությունը՝ Գլոբալ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում: Ազատազրկված բոլոր անձինք, այդ թվում՝ կանայք և անչափահասները 2020 և 2021 թվականներին ենթարկվել են ռա-

պիդ թեստավորման: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ անչափահասների շրջանում տարիքով պայմանավորված խնդիրներ չեն եղել, քանի որ ռապիդ թեստավորումն ախտորոշիչ նպատակով է կատարվել:

Հենց անձը մուտք է գործել հիմնարկ, թեստավորվել է: Եթե խցում 3 հոգի են եղել, 1-ի մոտ ախտանշաններ են նկատվել, 3-ին էլ նույն օրը թեստավորել ենք: Դրական դեպք հայտնաբերելու դեպքում կոնտակտավոր անձանց թեստավորել ենք յուրաքանչյուր երրորդ օրը, որպեսզի գաղտնի փուլը հնարավորինս վաղ հայտնաբերենք: Ջերմող հիվանդը պարտադիր թեստավորվել է: Եթե ջերմող հիվանդի թեստի պատասխանը բացասական է եղել, նույնիսկ առանց կոնտակտի առկայության 3 օրը 1 թեստավորել ենք, մինչև 14 օրն անցնի: Թեստավորել ենք այնքան, մինչև գտել ենք վիրուսը: Գաղտնի շրջանն անհատական է: Այդպես ենք արել, որպեսզի որևէ դեպք բաց չթողնենք, քանի որ 1 հոգին կարող էր մի քանի հոգու վարակել: Թեստերի սահմանափակում չենք ունեցել:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Ռապիդ թեստի դրական պատասխանի դեպքում կատարվել է ՊՇՌ հետազոտություն տվյալ քրեակատարողական հիմնարկին տարածքային առումով մոտ տեղակայված առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատությունում, որին կցագրված են ազատազրկված անձինք: ՊՇՌ հետազոտությունն անվճար հիմունքներով կատարվել է միայն բժշկական ցուցման հիման վրա: Այն դեպքում, երբ անհրաժեշտ է եղել ՊՇՌ հետազոտության վկայականը ներկայացնել տեսակցություն տրամադրելու համար, ազատազրկված անձինք հետազոտության համար վճարել են իրենց միջոցների հաշվին: Ազատազրկված կանանց և անչափահասների ՊՇՌ հետազոտությունը կատարվել է նույն սկզբունքով:

Եթե ռապիդ թեստը դրական է եղել, ազատազրկված անձը տեղափոխվել է ՊՇՌ հետազոտման: Եթե դրա պատասխանն էլ է դրական եղել, կազմակերպվել է բուժումը: Շրջապատին ամեն երրորդ օրը թեստավորել ենք, որ գաղտնի փուլը վաղ հայտնաբերենք: Անվճարունակ լինելու դեպքում պատվաստվել են և ներկայացրել պատվաստման վկայականը:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Դրական ախտորոշմամբ անձինք, առողջական վիճակի ծանրությունից ելնելով, բուժում են ստացել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, որտեղ հատուկ այդ նպատակով բաժանմունք է

բացվել, կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում՝ տրիաժի կողմից տրված համապատասխան ուղեգրման հիման վրա: Ազատազրկված կանայք միանգամից տեղափոխվել են առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ, քանի որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն կանանց բաժանմունք չունի: Տեղափոխումը կատարվել է Covid սպասարկող շուրջօրյա շտապօգնության ծառայության մեքենայով: «Աբովյան» ՔԿՀ-ում 2021 թվականին արձանագրվել է 1 դրական դեպք: Ազատազրկված կանանց և անչափահասների շրջանում համավարակով պայմանավորված մահվան դեպքեր չեն արձանագրվել[12]:

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ քրեակատարողական հիմնարկներում համավարակի հաղթահարմանը նպաստել է այն հանգամանքը, որ ազատազրկված անձինք ջերմելու պահից եղել են բուժանձնակազմի հսկողության տակ, իսկ վերջինս հասանելի և տեղյակ է եղել նրանց առողջական վիճակին: Բացի այդ, ՊՇՌ հետազոտությունը, համավարակի դեմ պատվաստումը և բուժումը կազմակերպվել են կենտրոնի և Առողջապահության նախարարության միջև համագործակցության շրջանակներում, բժշկական ցուցման առկայության դեպքում՝ անվճար հիմունքներով, ինչը նշանակում է, որ ազատազրկված անձանց անվճարունակ լինելը, քաղաքացիական հիվանդանոցների ծանրաբեռնվածությունը կամ միայն դրական ախտորոշմամբ հիվանդներին սպասարկելը չեն խոչընդոտել նշված գործընթացներին:

Եթե քաղաքացին 5-10 օր ջերմելուց հետո է դիմել բժշկի, մեր դեպքում հենց ջերմելու պահից եղել է բժշկի հսկողության տակ: Հիվանդանոցները մի պահ ծանր դեպքերն են ընդունել, քանի որ տեղ չկար: Այդ պատճառով քաղաքացիական հատվածում մահերի թիվը շատ էր: Մարդիկ չեն կարողացել անգամ ներարկում անելու համար բուժքույր գտնել: Մեր դեպքում նման խնդիր չի եղել: Բացի այդ, ազատազրկված անձանցից շատերը քաղաքացիական հատվածում անուշադրության մատնված կլինեին, քանի որ սոցիալապես անապահով են, հարազատներ չունեն: Հիմնարկում նրանց հետազոտությունների և բուժման ծախսերը պետությունն է հոգացել: Ուղեգիր տալը և բուժումը կազմակերպելը հեշտ է եղել համավարակի ժամանակ: Կանանց պարագայում ամենաթեթև դեպքն անգամ տեղափոխել ենք քաղաքացիական հիվանդանոց: Թեև տարածաշրջանով Աբովյան քաղաքն է մոտ, բայց անհրաժեշտության դեպքում տեղափոխել ենք նաև Երևանի Covid սպասարկող քաղաքացիական հիվանդանոց:

12.Ազատազրկված անձանց շրջանում 2020 թվականին հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 39 դրական դեպք: Բոլոր հիվանդներն ապաքինվել են: Համավարակով պայմանավորված մահվան դեպքեր չեն արձանագրվել: 2021 թվականին հայտնաբերվել է կորոնավիրուսային հիվանդության 162 նոր դեպք, որոնցից 150-ը բուժում են ստացել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի ստորաբաժանումում, 12-ը՝ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում, որոնցից 4-ը՝ մահվան ելքով:

Կանանց շրջանում ունեցել ենք 1 դրական դեպք: Երեխան վարակվել է մանկական կլինիկայում, երեխայից մայրն է վարակվել, ինչը բացահայտվել է հիմնարկում կատարված ռապիդ թեստի միջոցով: Բուժումը կազմակերպվել է քաղաքացիական հիվանդանոցում: Հիմնարկում ապահովվել է կոնտակտավոր անձանց մեկուսացումը: Կատարել ենք բոլոր կանխարգելիչ աշխատանքները:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Ինչ վերաբերում է համավարակի դեմ պատվաստմանը, ապա այն կատարվել է կամավոր սկզբունքով՝ ազատազրկված անձանց կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Պատվաստվելու մասին գրավոր կամ բանավոր դիմումներն ազատազրկված անձինք ներկայացրել են քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներին կամ բուժանձնակազմին, որոնց կողմից կազմվել են համապատասխան ցուցակները: Այդ ցուցակների հիման վրա կենտրոնը միջնորդել է քրեակատարողական հիմնարկին տարածքային առումով մոտ տեղակայված առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող պոլիկլինիկային, որին կցագրված են ազատազրկված անձինք: Պատվաստումը կատարվել է պոլիկլինիկայի իմունականխարգելման կաբինետի կողմից, քրեակատարողական հիմնարկի պայմաններում և անվճար հիմունքներով: Կենտրոնի բուժանձնակազմի կողմից տրվել է պատվաստման ցուցումը՝ հաշվի առնելով ազատազրկված անձանց առողջական վիճակը: Հետագայում բուժանձնակազմը հետևողականություն է ցուցաբերել պատվաստման վկայականներն ազատազրկված անձանց փոխանցելու և անձնական գործերին կցելու, ինչպես նաև հաջորդ պատվաստումը կատարելու ժամկետների նկատմամբ: Ազատազրկված անձանց մեծ մասը պատվաստվել է: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ ազատազրկված կանանց պատվաստումները կատարվել են նույն սկզբունքով: Անչափահասների շրջանում պատվաստումներ չեն կատարվել, քանի որ դրանք նախատեսված են 18 տարին լրացած անձանց համար: Պատվաստվելու ցանկություն հայտնելու դեպքում պետք էր ստանալ ծնողի համաձայնությունը, թեև նման դիմումներ չեն ստացվել:

Երբ պատվաստանյութերը բերել են, երկրում մեկնարկվել է պատվաստման գործընթացը, այն կատարվել է նաև ազատազրկված անձանց շրջանում: Քանի որ պատվաստումը կամավոր էր, մենք չէինք կարող ազատազրկված անձանց համար այն պարտադիր դարձնել: Պատվաստանյութն ազատազրկված անձինք են ընտրել: Նրանց հասանելի են եղել երկրում առկա բոլոր պատվաստանյութերը: Մենք տե-

ղեկացրել ենք, թե որ պատվաստանյութերից կան: Եթե անձի ընտրած պատվաստանյութը տվյալ պահին չի եղել, սպասել ենք, մինչև բերել են: Եղել են դեպքեր, երբ անձինք, հայտնվելով հիմնարկում, հայտարարել են, որ պատվաստվել են, սակայն վկայականն իրենց մոտ չի եղել: Մենք Արմեդ համակարգում ընդգրկված չենք, բայց գործընթացը դրանից չի տուժել: Բուժանձնակազմն անձնական կապերի միջոցով միջամտել է, որպեսզի վկայականն ուղարկեն, ինչի հիման վրա հիմնարկում կատարվել է հաջորդ պատվաստումը: Եթե անձը պատվաստումը ստանալուց հետո ազատվել է, թղթերը փոխանցելուց բացի բացատրվել է գործընթացը և պատվաստվելու կարևորությունը:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Ուսումնասիրության ժամանակ տեղեկացել ենք, որ բուժանձնակազմի կողմից իրազեկման աշխատանքներ են կատարվել պատվաստանյութերի, պատվաստման կարևորության, պատվաստվելու արդյունքում վարակի կառավարելիության, հիվանդացության իջեցման, հիվանդանալու պարագայում բուժման բարեհաջող ելք ունենալու մասին, ինչից հետո ազատազրկված անձանց շրջանում գործընթացի նկատմամբ վստահությունն ավելացել է: Գործընթացը խթանել է նաև տեսակցությունների տրամադրման համար պատվաստման վկայական ներկայացնելու պահանջը: Ինչ վերաբերում է ազատազրկված օտարերկրացի անձանց, ապա նրանք հեշտությամբ են պատվաստվել, ինչը պայմանավորված էր իրենց քաղաքացիության երկրում պատվաստման նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ գործընթացի վրա բացասաբար են ազդել պատվաստման վերաբերյալ ապատեղեկատվությունը և ազատազրկված անձանց կրոնական համոզմունքները:

Ազատազրկված անձանց մեջ կան, օրինակ, նախկին բժիշկներ կամ այլ մասնագետներ: Տեսնելով, որ նրանք պատվաստվել են, մյուսներն էլ սկսեցին պատվաստվել: Ապատեղեկատվությունը սկզբնական շրջանում շատ է ազդել գործընթացի վրա: Խուճապ կապ: Ինչ ասես լսում էին հեռուստացույցով, հարազատներից կամ ընկերներից: Ասում էին՝ մեզ չիպավորում են: Եղել են դեպքեր, երբ անձինք հրաժարվել են պատվաստվել կրոնական համոզմունքների պատճառով: Խոսքը Եհովայի վկաների մասին է: Բայց այլընտրանքը եղել է՝ թեստավորվել են: Թեստավորումից չեն հրաժարվել:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Ազատազրկված անձանց ՊՇՌ հետազոտության, համավարակի դեմ պատվաստման, դրական ախտորոշում ունեցող անձանց տեղա-

փոխման և բուժման գործընթացները կազմակերպվել են Առողջապահության նախարարի և կենտրոնի տնօրենի կողմից ընդունված համապատասխան իրավական ակտերի հիման վրա[13]:

Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումն «Աբովյան» ՔԿՀ-ում

Քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած անձինք, այդ թվում՝ կանայք և անչափահասները ենթարկվում են նախնական՝ արտաքին բժշկական զննության: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ այդ նպատակով «Աբովյան» ՔԿՀ-ի հսկիչ-անցագրային կետի հարևանությամբ առանձնացված սենյակը փոքր է, չունի օդափոխության համակարգ և պատուհան, կահավորված չէ բժշկական զննության համար անհրաժեշտ պարագաներով: Մտահոգիչ է այն, որ զննությունը նշված սենյակում անցկացնելու դեպքում հնարավոր չէ պահպանել սոցիալական հեռավորություն և ապահովել օդափոխություն, ինչը կարևոր է ազատազրկված կանանց և անչափահասների շրջանում համավարակի կանխարգելման տեսանկյունից: Հաշվի առնելով այդ անհարմարությունները՝ զննությունն աշխատանքային ժամերին կատարվել է մեկուսարանի մասնաշենքի բժշկական սպասարկման սենյակում, ոչ աշխատանքային ժամերին՝ կարճատև տեսակցության սենյակում:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման կողմից կատարվում է ազատազրկված կանանց և անչափահասների ամբուլատոր բուժումը և դիսպանսեր հսկողությունը[14]: Կանանց առողջության պահպանման և նրանց անհրաժեշտ բուժօգնություն

13.Առողջապահության նախարարի համապատասխան հրամանները հասանելի են Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կայքում:

14.Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Աբովյան» ՔԿՀ-ում 2020 թվականին ամբուլատոր բուժօգնություն է տրամադրվել 836, 2021 թվականին՝ 676 անձի: Դիսպանսեր հաշվառման վերցված անձանց թիվը 2020 թվականին ըստ հիվանդությունների հետևալն է՝ հոգեկան առողջության խնդիրներ՝ 35, սիրտ-անոթային հիվանդություններ՝ 15, ստամոքս-աղիքային հիվանդություններ՝ 13, սեռավարակներ և մաշկային հիվանդություններ՝ 9, կախվածություններ՝ 2, միզասեռական համակարգի հիվանդություններ՝ 3, էնդոկրին համակարգի հիվանդություններ՝ 8, նորագոյացություններ՝ 14, այլ՝ 12: Դիսպանսեր հաշվառման վերցված անձանց թիվը 2021 թվականին ըստ հիվանդությունների հետևալն է՝ հոգեկան առողջության խնդիրներ՝ 30, սիրտ-անոթային հիվանդություններ՝ 8, ստամոքս-աղիքային հիվանդություններ՝ 15, սեռավարակներ և մաշկային հիվանդություններ՝ 2, միզասեռական համակարգի հիվանդություններ՝ 6, էնդոկրին համակարգի հիվանդություններ՝ 6, նորագոյացություններ՝ 8:

տրամադրելու նպատակով հիմնարկի ստորաբաժանումը համալրված է գինեկոլոգի հաստիքով: Առկա են ատամնաբուժարան և գինեկոլոգիական միջամտության սենյակ: Ատամնաբուժական ռենտգենից բացի հիմնարկի պայմաններում կատարվում է էլեկտրասրտագրություն և գլյուկոմետրիա: Ստորաբաժանումն ապահովված է ատամնաբուժական ռենտգենի ինքնաերևակվող ժապավեններով, ստրիպներով և գլյուկոմետրով: Կանանց և անչափահասների գործիքային մյուս և լաբորատոր հետազոտությունները, նեղ մասնագիտական խորհրդատվությունները և բուժումը կազմակերպվում է Ռ. Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոնում՝ արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում համապատասխան ուղեգրերով: Աբովյանի բժշկական կենտրոնից բացի կանայք կցագրված են նաև Աբովյանի ծննդատանը: Քաղաքացիական բժշկական կազմակերպություններ ազատազրկված կանանց և անչափահասների տեղափոխումները կազմակերպվում են Քրեակատարողական ծառայության կամ շտապ օգնության մեքենաներով[15]:

Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ քրեակատարողական հիմնարկներ մուտք գործելիս ինչպես ազատազրկված մյուս անձանց, այնպես էլ կանանց շրջանում կատարվում է ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի, Հեպատիտ C-ի (համավարակի ժամանակ՝ կորոնավիրուսային վարակի) ռապիդ թեստավորում, տարվա մեջ 2 անգամ անցկացվում է ֆլյուրոգրաֆիկ հետազոտություն: Ըստ Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության՝ երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում բժշկական որևէ գործառույթ չի կասեցվել, իրականացվել են ինչպես կանխարգելիչ, այնպես էլ ֆլյուրոգրաֆիկ հետազոտությունները: Սակայն մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ կորոնավիրուսային վարակի ռապիդ թեստավորումից բացի մյուս ռապիդ թեստավորումներն անցկացվում են անձի՝ քրեակատարողական հիմնարկ առաջին մուտքի ժամանակ և ընդունվելուց տևական ժամանակ անց, ինչը մտահոգիչ է վարակիչ հիվանդությունների արդյունավետ կանխարգելման տեսանկյունից: Նաև արձանագրել ենք, որ ֆլյուրոգրաֆիկ հետազոտութ-

15.Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականին ստացիոնար բուժում է ստացել 6, 2021 թվականին՝ 18 անձ: Նշված թվականներին քաղաքացիական հիվանդանոցներ են տեղափոխվել համապատասխանաբար 141 և 133 անձ:

յունը տարվա մեջ 2 անգամ անցկացնելը բավարար չէ առողջական հնարավոր խնդիրների բացահայտման և բուժման համար, քանի որ հետազոտության անցկացման և անձի՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու ժամանակահատվածը կարող է չհամընկնել: Բացի այդ, նշված հետազոտության անցկացումը պարտադիր բնույթ չի կրում, ինչը նշանակում է, որ կանայք կարող են հրաժարվել:

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ ազատազրկված անձինք, այդ թվում՝ կանայք, ներառված են ՄԻԱՎ-ի վերաբերյալ պարտադիր բժշկական խորհրդատվության և հետազոտության ենթակա խմբում: Նրանց շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվությունը և հետազոտությունն իրականացվում է «Կալանավորված անձանց և դատապարտյալների ՄԻԱՎ վարակի վերաբերյալ բուժաշխատողների կողմից նախաթեստային և հետթեստային խորհրդատվության ու հետազոտության իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 10-ի թիվ 733-Ն որոշման համաձայն: Բուժումը կազմակերպվում է «Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման» կլինիկական ուղեցույցի հիման վրա[16]: Քրեակատարողական հիմնարկներից ուղեգրված՝ ՄԻԱՎ վարակով պացիենտների արյան փորձանմուշների իմունաբանական և վիրուսաբանական հետազոտությունները կատարվում են Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում: Քրեակատարողական հիմնարկներում գտնվող ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպանսերային հսկողությունն իրականացնում են նշված կենտրոնի մասնագետները, որոնք Քրեակատարողական բժշկության կենտրոնի բժիշկներին տրամադրում են խորհրդատվություն ՄԻԱՎ վարակով պացիենտի վարման հարցերով՝ պլանային կարգով և ըստ անհրաժեշտության: ՀՌՎ դեղերը տրամադրում է Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը: Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 և 2021 թվականներին «Աբովյան» ՔԿՀ-ում ՄԻԱՎ դրական կարգավիճակ է ունեցել 1 կին դատապարտյալ, ով երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակ ՀՌՎ դեղերի կամ առողջապահական ծառայությունների հասանելիության հետ կապված խնդիրներ չի ունեցել: Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրված խնդիրները վերաբերել են Քրեակատարողական բժշկության կենտրոնի բժիշկների կողմից

16.Համապատասխան իրավական ակտերը հասանելի են Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի կայքում:

նախաձեռնողականության պակասին և ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կազմակերպաիրավական ձևի փոփոխությանը[17], ինչը որոշակիորեն ազդել է բուժման անընդհատության ապահովման վրա:

ՄԻԱՎ դրական կարգավիճակով 2 կին կա հիմա: Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը ՀՌՎ դեղերը տալիս է, բուժքույրն ամեն օր երեկոյան համայցի ժամին տալիս է հիվանդին: Երբ ՄԻԱՎ ունեցող կինը եկավ, հղի էր: Երբ հղիացել է, ՄԻԱՎ է ունեցել: Հետաքրքրվել ենք: Ասել են՝ Հանրապետականը միակ հիվանդանոցն է, որն իրենց ծննդալուծումը կազմակերպում է: Տարել ենք, երեխային այնտեղ է ունեցել: Հետազոտել ենք, երեխան վարակ չունի: Երբ 2022 թվականին մյուս կինն ընդունվել է հիմնարկ, 1 ամիս հետո ռապիդ թեստ ենք արել, պատասխանը բացասական է եղել: Հետո տարել ենք կանացի վիրահատության: Արգանդի հեռացման ժամանակ հիվանդանոցում ռապիդ թեստ են արել, պատասխանը դրական է եղել: Միանգամից տեղեկացրել ենք կենտրոնին: Այսինքն՝ գաղտնի փուլն է եղել, մեզ մոտ չի բացահայտվել, վիրահատության ժամանակ է հայտնաբերվել:

«Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման ներկայացուցիչ

Համավարակի ժամանակ որևէ գործընթաց չի տուժել: Մենք աշխատանքը չենք դադարեցրել, հեռավար չենք աշխատել: Հիմնարկներում մուտքի սահմանափակումները չեն խոչընդոտել մեր աշխատանքին: 2020 թվականին խնդրահարույց իրավիճակ էր: «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի և ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի միավորմամբ ստեղծվեց Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը: Ղեկավար անձնակազմը փոխվել էր: Աշխատակազմը համալրվել էր: Այն բժիշկները, որոնք զբաղվել են դատապարտյալների բուժմամբ, դուրս էին եկել աշխատանքից: Մինչև իմացանք՝ որ հիմնարկում ինչ հիվանդ ունենք, մոտ 1 ամիս տևեց: Այդ ժամանակ որոշ բացթողումներ եղել են, բայց ոչ համավարակի պատճառով: Եթե հետազոտությունն այսօր չենք կարող կատարել, վաղը կկատարենք, դա խնդիր չէ: Բայց եթե դեղորայքն այսօր սպառվում է, վաղը չունեն, դա արդեն խնդիր է: Դա անընդհատ բուժում է: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկների բժիշկներն առաջ ավելի հետևողական էին, արյունը բերում էին, դեղը ստանում էին: Հիմա դա մնացել է մեր կենտրոնի վրա, թեև ըստ ուղեցույցի՝ համատեղ պետք է զբաղվենք:

Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի ներկայացուցիչ

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ Քրեակատարողական բժշկության կենտրոնը չունի մանկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու լիցենզիա և համապատասխան մասնագետ: Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ կենտրոնի գործառույթն ազատազրկված անձանց բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելն է,

17.ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի թիվ 77-Ա որոշում:

իսկ նրանց հետ քրեակատարողական հիմնարկում բնակվող մանկահասակ երեխաները չեն դիտարկվում դրա ներքո18: Մանկահասակ երեխաների բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում է Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոնի կողմից: Բացի այդ, անհրաժեշտության դեպքում հրավիրվում է շտապ օգնություն, որը երեխաներին տեղափոխում է մասնագիտացված մանկական բժշկական հաստատություն: Մանկաբույժի կողմից նշանակված դեղորայքը ևս տրամադրվում է նշված կենտրոնի կողմից: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ հանձնուքների արգելքի և սահմանափակման ժամանակ դժվարություններ են առաջացել այն կանանց համար, ովքեր առաջին բժշկական օգնության համար նախատեսված մանկական դեղամիջոցները, օրինակ, ջերմիջեցնողները, ձեռք են բերել իրենց միջոցների հաշվին կամ ընտանիքի կողմից: Նաև արձանագրել ենք, որ առկա չեն մանկահասակ երեխաներին ազատազրկված ծնողների հետ առողջապահական մարմինների բուժական հաստատություններ ուղեկցելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ: Բացի այդ, հետազոտությունները, նեղ մասնագիտական խորհրդատվությունները և բուժումը համավարակի ժամանակ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում կազմակերպելը կարող է դառնալ ազատազրկված կանանց և անչափահասների, իրենց մայրերի հետ հիմնարկում բնակվող մանկահասակ երեխաների վարակման, նրանց կողմից քրեակատարողական հիմնարկ վարակի ներթափանցման և տարածման պատճառ:

Որպես Հայաստանի քաղաքացի՝ երեխան կցագրված է պոլիկլինիկային: Մայրը բարձրաձայնում է խնդրի մասին, բուժանձնակազմն օգնում է տանել պոլիկլինիկա, թեև դա մեր գործը չէ: Երբ մայրն ասում է՝ երեխան խնդիր ունի, հիմնարկն է կազմակերպում տեղափոխումը: Այն, որ մեր բժիշկներն ուղեկցում են, մեր գործունեության մեջ չի մտնում, զուտ մարդկային վերաբերմունք է: Մենք մանկական դեղեր չենք ստանում: Եթե մայրն ունի, տալիս է: Եթե չունի, Մայակովսկու բժիշկը ռեցեպտ է գրում, ըստ այդմ որոշ դեղատներից անվճար վերցնում ենք:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ Քրեակատարողա-

18.Ազատազրկված ծնողը կարող է իր՝ մինչև 3 տարեկան երեխային պահել իր մոտ: Երեխայի 3 տարին լրանալուց հետո քրեակատարողական հիմնարկի պետը կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև ծնողի պատժի ժամկետի ավարտը, եթե պատժի ավարտին մնացել է Քրեակատարողական նախկին օրենսգրքով՝ 2, իսկ գործող օրենսգրքով՝ 3 տարուց ոչ ավելի ժամանակ:

կան բժշկության կենտրոնի բուժանձնակազմը տարբեր հավելվածների միջոցով հեռավար խորհրդատվություն է տրամադրում ազատազրկված անձանց, ինչն օգնում է նվազեցնել վերջիններիս քաղաքացիական հիվանդանոցներ տեղափոխելու դեպքերը և ապահովել այն մասնագետների հասանելիությունը, որոնցով կենտրոնի ոչ բոլոր ստորաբաժանումներն են համալրված:

Մենք հեռաբժշկություն անում ենք տարբեր հավելվածներով: Ոչ բոլոր ստորաբաժանումներում սրտաբան ունենք, բայց բոլոր տեղերում ունենք ԷԿԳ-ի սարքեր, բուժքույրերը վերապատրաստված են: ԷԿԳ-ն բուժքույրերն անում են, ուղարկում սրտաբանին, ով պատասխանը գրում է, ուղարկում տվյալ ստորաբաժանման բժշկին: Այսինքն՝ ԷԿԳ անելու կամ կարդալու համար անձին չենք տանում քաղաքացիական հիվանդանոց կամ շտապ օգնություն չենք կանչում: Համավարակի ժամանակ ինֆեկցիոն բաժանմունքով և Covid-ով զբաղվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի բժշկուհին: Կասկածելի վիճակների դեպքում նույն ձևով ենք աշխատել: Սյունիքի մարզը 1 հոգեբույժ ունի: «Գորիս» ՔԿՀ-ի համար հոգեբույժ չենք կարողանում գտնել: Այդ բացը լրացնում ենք՝ այլ ստորաբաժանման հոգեբույժի գործուղելով: Սակայն հոգեբույժին ամիսը 1 անգամից ավել չենք կարող գործուղել: Գործուղման ժամանակ հոգեբույժն անձին իր աչքով տեսնում է, հետո այնտեղի բժիշկն անընդհատ հեռախոսով կապը պահում է մեր հոգեբույժի հետ, դեղն ավելացնում կամ պակասեցնում են: Եթե կարիք է լինում, հոգեբույժն արտահերթ է գնում Գորիս: Եթե սուր վիճակ է լինում, ապա հիվանդին ուղարկում ենք «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ: Այդ գործիքակազմը կիրառելը հեշտացնում է մեր աշխատանքը, անձին անընդհատ դուրս տանելու խնդիր չի լինում: Եթե բժիշկը ժամանակ չունի կամ 1 մասնագետ է, կարող է համակարգչի դիմաց նստած օգուտ տալ:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Սակայն մտահոգիչ է այն, որ երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում Քրեակատարողական բժշկության կենտրոնում էլեկտրոնային բժշկության և հեռաբժշկության համակարգ ներդրված չի եղել: Ազատազրկված անձինք ներկայումս Արմեդ համակարգում ընդգրկված են իրենց կցագրման առողջության առաջնային պահպանման կազմակերպությունների միջոցով: Կենտրոնն ընդգրկված չէ Արմեդ համակարգում, ինչը բուժանձնակազմին հնարավորություն կտա ծանոթանալ քրեակատարողական հիմնարկ մուտք գործած անձանց հիվանդության պատմությանը և ապահովել նրանց բուժման շարունակականությունը: Կենտրոնն ընդգրկված չէ նաև e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգում, ինչը կարող է նպաստել Քրեակատարողական բժշկության կենտրոնի և Քրեակատա-

րողական ծառայության միջև ազատազրկված անձանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակմանը և փաստաթղթաշրջանառության կրճատմանը: Ինչ վերաբերում է էլեկտրոնային բժշկության և հեռաբժշկության համակարգի ներդրմանը, ապա 2021 թվականին կատարվել է կարիքների գնահատում, ինչի հիման վրա ցուցակագրվել են այն սարքավորումները, որոնցով անհրաժեշտ է համալրել ստորաբաժանումները: Այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներն ավարտին են հասցվել 2022 թվականի ավարտին, սակայն համակարգը դեռևս չի գործարկվել: Քրեակատարողական բժշկության կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ այն ծրագրային ապահովման մշակման ավարտական փուլում է:

«Աբովյան» ՔԿՀ-ի աշխատակազմը և աշխատանքի պայմանները

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ համակարգի առանձնահատկությամբ պայմանավորված՝ աշխատանքը հեռավար չի կատարվել: Կորոնավիրուսային հիվանդությամբ վարակված աշխատակիցների՝ պաշտոնով պայմանավորված գործառույթները կատարել են այլ աշխատակիցներ՝ իրենց պաշտոնի անձնագրին և գործառույթներին համապատասխան: Աշխատակիցները ջերմաչափվել են ինչպես քրեակատարողական հիմնարկներ մուտք գործելիս, այնպես էլ աշխատանքային օրվա ընթացքում՝ նվազագույնը 2 անգամ: Ստուգվել է նրանց մոտ դիմակների և ձեռնոցների առկայությունը, պահպանվել է դրանց կրման կարգը[19]:

Հիմնարկներ մուտք գործած անձանց և աշխատակիցների ջերմաչափումը կատարվել է հիմնարկի հսկիչ-անցագրային կետում: Եթե աշխատակիցը ջերմել է, ուղարկել են թեստավորվելու: Թեև ոչ պաշտոնական համագործակցություն եղել է հիմնարկների և կենտրոնի միջև: Օրինակ, բուժանձնակազմն աջակցել է ջերմաչափման գործընթացին, հեռավար ջերմաչափեր են տրամադրվել ժամանակավոր օգտագործման համար:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

19.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականին համակարգի աշխատակիցների շրջանում կատարվել է 561 թեստավորում, որից դրական հաստատված դեպքերի թիվը կազմել է 270: 2021 թվականին կատարվել է 316 թեստավորում, որից դրական հաստատված դեպքերի թիվը կազմել է 102: Կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստվել է 1964 աշխատակից: Նրանց շրջանում համավարակով պայմանավորված մահվան դեպքեր չեն արձանագրվել:

Վարչական մասի աշխատակիցները վարչական մասնաշենքի առաջին հարկում են ջերմաչափվել, հետո բարձրացել վերև: Մյուս աշխատակիցները հսկիչ-անցագրային կետում են ջերմաչափվել, հետո ներս մտել:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Բոլոր կանոնները խիստ պահվել են: Աշխատակիցները միշտ դիմակով են եղել: Աշխատակիցների սենյակում ամեն ինչ եղել է: Շատ հոգատար և ուշադիր էին: Մեզ էլ են դիմակներ բաժանել:

Կալանավորված կին, մեկուսարանի մասնաշենք

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ համավարակի կանխարգելմանն առնչվող գործառույթների թերացման պատճառով աշխատանքից ազատման, հեռացման կամ պաշտոնի փոփոխության դեպքեր չեն գրանցվել: Սակայն մտահոգիչ է այն, որ չի դիտարկվել այդ գործառույթները պատշաճ կատարած աշխատակիցներին պարգևավճար կամ հավելավճար տրամադրելու կամ նրանց աշխատավարձը բարձրացնելու հարցը: Աշխատակիցները պարբերաբար իրազեկվել են համավարակին վերաբերելի և գործնականում կիրառելի իրավակարգավորումների մասին, հիմնարկների մուտքի մոտ և այլ վայրերում փակցվել են իրազեկման թերթիկներ: Սակայն նրանց համար համավարակին արձագանքման և համավարակի պայմաններում գործառույթների կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության դասընթացներ չեն կազմակերպվել[20]:

Ի լրումն նշվածի, մշտադիտարկման այցի ժամանակ «Աբովյան» ՔԿՀ-ում արձանագրել ենք աշխատանքի պայմանների հետ կապված խնդիրներ, որոնք մտահոգիչ են համավարակի ժամանակ աշխատակիցների առողջության պահպանման և անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից: Աշխատասենյակները նոր գույքով համալրելու և առկա գույքի ոչ բարվոք վիճակում լինելու հետ կապված խնդիրներից բացի վերանորոգման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն նկատել ենք հատկապես մեկուսարանի մասնաշենքի աշխատասենյակներում, որոնց առաստաղների և պատերի ծեփամածիկը խոնավության պատճառով մեծամասամբ թափ-

20.2020 թվականի հունիսի 2-ին «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ և Ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպել է «Կորոնավիրուսի կանխարգելումը և վերահսկողությունը քրեակատարողական հիմնարկներում» թեմայով հեռավար դասընթաց, որին մասնակցել են նաև «Աբովյան» ՔԿՀ-ի աշխատակիցները: Այն ներառել է թեմաներ համավարակի կանխարգելման, անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման, ձեռքերի հիգիենայի, ախտահանման և վարակիչ թափոնների կառավարման վերաբերյալ:

ված էր: Մասնաշենքի երկրորդ հարկում հսկիչներն ապահովված չեն աշխատասենյակով, փոխարենը տեղադրված է աշխատանքային 1 սեղան: Կանանց տեղամասի մասնաշենքի աշխատասենյակները համեմատաբար բարվոք վիճակում են, սակայն նկատել ենք, որ աշխատակիցների համար առանձին սանհանգույց նախատեսված չէ: Նրանք օգտվում են առաջին հարկի սանհանգույցից, որը տեղակայված է կին դատապարտյալների լոգարանի տարածքում: Բացի այդ, նկատել ենք, որ աշխատակիցներն ապահովված չեն հանգստի և ընդմիջման կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններով: Օրինակ, կանանց տեղամասի մասնաշենքի երկրորդ հարկում նույն սենյակն օգտագործում են միաժամանակ հանգստանալու և սնվելու համար:

Կանանց տեղամասի և մեկուսարանի մասնաշենքեր

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներում և վարչական մասնաշենքերում կատարվել են ախտահանման աշխատանքներ: Գործընթացը կազմակերպվել է Առողջապահության նախարարության կողմից սահմանված ժամկետներում և ախտահանող նյութերով: Պետական բյուջեի միջոցների հաշվին 2020 թվականին ձեռք է բերվել 800լ ժավել, 500կգ քլորակիր նյութ, 2021 թվականին՝ 2000լ ժավել, 500կգ քլորակիր նյութ: Նշված և մյուս նյութերի և պարագաների բաշխումն ըստ քրեակատարողական հիմնարկների կատարվել է՝ նկատի առնելով այնտեղ պահվող ազատազրկված անձանց թիվը, խցերի և կացարանների քանակը: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում ախտահանման աշխատանքները կատարվել են նույն սկզբունքով: Հիմնարկի բնակելի գոտու և վարչական մասնաշենքի տարածքն ախտահանվել է օրական նվազագույնը 3 անգամ: Այդ նպատակով հիմնարկին 2020 թվականին տրամադրվել է 70լ ժավել, 40կգ քլորակիր նյութ, 2021 թվականին՝ 130լ ժավել, 25կգ քլորակիր նյութ[21]:

21.2020 թվականին «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ «Աբովյան» ՔԿՀ-ին տրամադրել է անհատական պաշտպանիչ միջոցներ և ախտահանող նյութեր:

Տարածքների ախտահանման համար մեծ քանակությամբ նյութեր են ձեռք բերվել և տրամադրվել քրեակատարողական հիմնարկներին: Ախտահանումն օրական նվազագույնը 3 անգամ է կատարվել: Տեղեր կան, որ ամեն մտնել, դուրս գալուց հետո ախտահանվել են:

Քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ

Ամբողջ տարածքը, այդ թվում վարչական, դռները, սենյակների ներսը քլորով ախտահանվել է: Հիմնականում օրվա վերջում է արվել, քանի որ այդ նյութերի հոտը ծանր էր: Ռեժիմի փոփոխության արդյունքում կանանց մի մասնաշենքից մյուսը տեղափոխելը ռիսկային չէր, քանի որ կանխարգելման աշխատանքները զուգահեռ են կատարվել: Խցերում անհատական ալկոգել չի տրամադրվել: Ալկոգելով լի տարաները տեղադրվել են հեռախոսների մոտ կամ միջանցքներում:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Համավարակի դեմ պայքարի համատեքստում մտահոգության տեղիք են տալիս ոչ այնքան ախտահանման աշխատանքների կազմակերպումը, որքան հիմնարկի շենքային և դրա սանիտարահիգիենիկ ոչ բավարար պայմանները: Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ առավել անմխիթար վիճակում է մեկուսարանի մասնաշենքը: Խոնավության պատճառով միջանցքների, խցերի և դրանց սանհանգույցների, ինչպես նաև աշխատասենյակների պատերի ու առաստաղների արտաքին շերտը քայքայված էր, ծեփը թափված կամ տեղ-տեղ ծածկված բորբոսով: Վերանորոգման անհրաժեշտություն նկատվել է մասնաշենքի բոլոր հատվածներում: Թեև մեկուսարանի մասնաշենքի համեմատությամբ կանանց տեղամասի մասնաշենքը բարվոք վիճակում է, այնուամենայնիվ, նկատել ենք վերանորոգման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն հատկապես լոգարաններում և սանհանգույցներում:

Կանանց խնդիրները հիմնականում ներվերից է՝ նևրոզ, սրտի, ոտքերի, մեջքի ցավ: Բնական է, հատակը բետոն է, խոնավությունը շատ է: Նոյեմբերին, թե հոկտեմբերի վերջին միացնում են ջեռուցումը: Ճիշտ է, ձմեռը ստեղ շատ տաք է, բայց խոնավությունն ամեն տեղ էլ կա:

Կին դատապարտյալ, կանանց տեղամասի մասնաշենք

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ հիմնարկում պարբերաբար կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, սակայն հիմնանորոգման աշխատանքները մեկնարկվել են 2022

թվականից[22]: Դա նշանակում է, որ ազատազրկված կանայք և անչափահասները երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում պահվել են շենքային այնպիսի պայմաններում, որոնք մտահոգիչ են ոչ միայն սանիտարահիգիենիկ բավարար վիճակի ապահովման, այլև առողջության պահպանման տեսանկյունից:
Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Աբովյան» ՔԿՀ-ում ջեռուցումն իրականացվում է կենտրոնական կաթսայատնից: Այն հասանելի է հիմնարկի բոլոր ենթակառուցվածքներում: Մինչդեռ հիմնարկում կենտրոնացված օդափոխության համակարգ տեղադրված չէ: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ կանայք և անչափահասները խցերը և կացարաններն օդափոխում են պատուհանները բացելու միջոցով: Օդափոխության այս տարբերակը ցուրտ եղանակներին կարող է դառնալ սառն օդի ներհոսքի և այդպիսով՝ հիվանդացության պատճառ, ինչը մտահոգիչ է համավարակի ժամանակ նրանց առողջության պահպանման տեսանկյունից:

Կարանտինային խցեր

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հիմնարկներ մուտք գործելիս ազատազրկված անձինք երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում կարանտինային բաժանմունքում

22.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մեկուսարանի մասնաշենքում լոգարանները, խցերի սանհանգույցները, ներքին և արտաքին ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցը, առաջին հարկի միջանցքը, կանանց տեղամասի մասնաշենքում լոգարանները և սանհանգույցները, ներքին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը 2022 թվականին հիմնովին վերանորոգվել են, իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաների համար կառուցվել է լոգասենյակ: Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականին հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված շինարարական ընկերության հետ 2023 թվականի հուլիսի 24-ին կնքվել է 60,799,200 դրամ արժողությամբ պայմանագիր, որի շրջանակներում նախատեսվում է կատարել մեկուսարանի մասնաշենքի միջանցքների, խցերի, աշխատասենյակների, մարզադահլիճի, զբոսաբակերի ընդլայնման, վերանորոգման և հարդարման շինարարական աշխատանքներ, որոնք ֆինանսավորման բացակայության պատճառով դեռևս ընթացք չեն ստացել: 2023 թվականին մրցույթ է հայտարարվել հիմնարկի կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակների, այցելուների համար նոր սպասասրահի և սանհանգույցի կառուցման նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման նպատակով:

պահվել են մինչև 14 օր ժամկետով՝ նախկին 7 օրվա փոխարեն[23]: Այդ ժամկետը սահմանվել է՝ հիմք ընդունելով հիվանդության նշանների բացահայտման հնարավոր օրերի թիվը: Ազատազրկված անձանց տեղաբաշխումը խցերում կամ կացարաններում կատարվել է կորոնավիրուսային հիվանդության ախտանշանների բացակայության դեպքում: Կարանտինային խցում պահելու ընդհանուր ժամկետները և կանոնները գործել են, երբ ազգային առողջապահական համակարգում համավարակով պայմանավորված սահմանափակումները մեղմացել են:

Կարանտինային բաժանմունքում կանանց և անչափահասների զբոսանքի ու լոգանքի կազմակերպման և սննդի տրամադրման հետ կապված խնդիրներ չենք արձանագրել: Սակայն մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ հնարավոր չէր հիմնարկ մուտք գործած յուրաքանչյուր անձի մինչև 14 օր ժամկետով այնտեղ պահել՝ խցերի քանակի, դրանց պայմանների և սանիտարահիգիենիկ վիճակի պատճառով[24]: Ազատազրկված կանանց և անչափահասների համար նախատեսված է կարանտինային 2 խուց, որոնք տեղակայված են մեկուսարանի մասնաշենքում՝ պատժախցի հարևանությամբ: Կարանտինային խցերը և ներկառուցված սանհանգույցներն անմխիթար վիճակում են, դրանց հատակը բետոնից է, խոնավության պատճառով պատերն ու առաստաղը բորբոսնած են: Օդափոխությունը կատարվում է պատուհանը բացելու միջոցով, ինչը կարող է հիվանդացության պատճառ դառնալ: Անչափահասներին և կանանց, այդ թվում՝ հղիներին, մանկահասակ երեխաներին և նրանց մայրերին համավարակի ժամանակ նման պայմաններում բնակեցնելը մտահոգիչ է նրանց առողջության պահպանման և անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:

23.«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը և Քրեակատարողական օրենսգիրքը, որն ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, կալանավորված անձանց և դատապարտյալների համար նախատեսում են կարանտինային բաժանմունքում պահելու մինչև 7 օր ժամկետ: Քրեակատարողական նոր օրենսգրքով, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, դատապարտյալներին կարանտինային բաժանմունքում պահելու ժամկետը փոխվել է՝ դառնալով մինչև 15 օր:

24.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականին «Աբովյան» ՔԿՀ մուտք է գործել 42 կալանավորված անձ և 4 դատապարտյալ, 2021 թվականին՝ 65 կալանավորված անձ և 6 դատապարտյալ:

Քննչական սենյակներ

Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ փաստաբանները և քրեական վարույթ իրականացնող մարմինների ներկայացուցիչները երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներ մուտք գործելիս ջերմաչափվել են: Ազատազրկված անձանց հետ նրանց հանդիպումները կատարվել են անհատական պաշտպանիչ միջոցների առկայության պայմաններում: Հանդիպումների ժամանակ պահպանվել է սոցիալական հեռավորություն: Այն սենյակները, որտեղ կայացել են հանդիպումները, Առողջապահության նախարարության կողմից սահմանված ժամկետներում ախտահանվել են, տեղադրվել են ախտահանող նյութերով տարաներ, կատարվել է օդափոխություն:
Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում գործընթացը կատարվել է նույն սկզբունքով: Նաև տեղեկացել ենք, որ հանդիպումների համար հիմնարկում առանձնացված է 2 սենյակ, որոնք ախտահանվել են սահմանված կարգով և ախտահանող նյութերով: Ճիշտ է, սենյակների խոհանոցային հատվածները և լոգարաններն ապահովված են հոսող սառը ջրով, սակայն արձանագրել ենք սենյակներում օդափոխությունը պատուհանը բացելու միջոցով կատարելու հետևանքով հիվանդացության առաջացման, խոհանոցային հատվածներում և լոգարաններում սանիտարահիգիենիկ բավարար պայմանների ապահովման և վերանորոգման հետ կապված խնդիրներ, ինչը մտահոգիչ է համավարակի ժամանակ ոչ միայն կանանց և անչափահասների, այլև փաստաբանների և քրեական վարույթ իրականացնող մարմինների ներկայացուցիչների առողջության պահպանման և անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:

Երբ ազատազրկված անձինք գնացել են քննիչի մոտ կամ հիվանդանոց, պարտադիր դիմակներ են կրել: Քննչական սենյակներում 1,5 մետր հեռավորություն է պահպանվել հանդիպումների ժամանակ:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Ազատազրկված օտարերկրացի կանայք

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված օտարերկրացի անձանց, այդ թվում՝ կանանց շրջանում համավարակի կանխարգելման վերաբերյալ իրենց հասկանալի լեզվով իրազեկման աշխատանքներ են կատարվել: Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից հիմնարկներին տրամադրվել են տարբեր լեզուներով թարգմանված տեղեկագրեր: Նշված կոմիտեի հետ համագործակցության շրջանակներում մշակվել են իրազեկման թերթիկներ, որոնք հայերենից բացի հասանելի են եղել նաև պարսկերեն, ռուսերեն, իսպաներեն և անգլերեն լեզուներով: Տեղեկագրերը և իրազեկման թերթիկները փակցվել են ազատազրկված անձանց համար հասանելի վայրերում:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ազատազրկված անձինք հնարավորինս իրազեկվել են իրենց հասկանալի ձևով: Պաստառները տեղեկատվություն են պարունակել կանխարգելման և պատվաստման մասին: Նրանց կողմից դժգոհություններ չեն եղել:

Քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ օտարերկրացի ազատազրկված անձանց հանձնման գործընթացում[25] խստագույնս պահպանվել են տվյալ պահին գործող սանիտարական և հակահամաճարակային նորմերի պահանջները: Թռիչքների արգելքը չի խոչընդոտել գործընթացին, քանի որ գործընթացն այդ ժամանակահատվածում կատարվել է տրանսպորտային միջոցներով:

Օտարերկրացի ազատազրկված կանայք մեզ հետ զրույցում նշել են, որ լեզվական խոչընդոտների պատճառով չեն կարողացել իրենց քաղաքացիության երկիր արտահանձնման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն ստանալ: Նաև տեղեկացրել են, որ լեզվական խոչընդոտների պատճառով դժվարություններ են ունեցել առողջա-

25.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հանձնման գործընթացն իրականացվել է 1957 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված «Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիա»-ով սահմանված դրույթներով, որը Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 25-ից: 2020 թվականին փոխանցվել է 28 դատապարտյալ, հանձնվել է 8 կալանավորված անձ, 2021 թվականին՝ համապատասխանաբար 19 դատապարտյալ և 8 կալանավորված անձ:

պահական, հոգեբանական ու իրավաբանական ծառայությունների և վերասոցիալականացման միջոցառումների հասանելիության տեսանկյունից: Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ օտարերկրացի ազատազրկված անձանց թարգմանչական ծառայությունների մատուցման գործընթացը ներդրվել է 2022 թվականից, որը վերաբերում է քրեակատարողական ծառայության կարիքներին[26] և չի ներառում բժշկական օգնության և սպասարկման ոլորտը[27]: Դա նշանակում է, որ համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ բավարար պայմաններ չեն ստեղծվել ազատազրկված օտարերկրացի անձանց, այդ թվում՝ կանանց առողջության պահպանման, համապատասխան ծառայությունների հասանելիության և նվազագույն մարդկային շփման ապահովման համար:

Հոգեբանական աշխատանքների կազմակերպումը

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ ազատազրկման պայմանները, հասարակությունից մեկուսացումը, դրանով պայմանավորված՝ արտաքին աշխարհի հետ ոչ լիարժեք կապը կամ դրա խզումն անհամաչափ են ազդում կանանց և անչափահասների հոգեբանության վրա՝ առաջացնելով անհանգստություն, լարվածություն, ընկճախտ և մի շարք այլ խնդիրներ: Կան անչափահասներ, ովքեր, քրեական գործի առանձնահատկությամբ պայմանավորված կամ անվտանգության նկատառումներից ելնելով, ազատազրկման ողջ ընթացքում միայնակ են պահվում, ինչը բացասաբար է անդրադառնում ոչ միայն նրանց հոգեբանական վիճակի, այլև տարիքային զարգացման վրա: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկա-

26.Ազատազրկված օտարերկրացի անձանց համար պետական միջոցների հաշվին թարգմանչական ծառայությունների տրամադրման գործընթացը ներդրվել է 2022 թվականից: Այն վերաբերում է ազատազրկված օտարերկրացի անձանց իրենց իրավունքների և պարտականությունների, քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի, Հայաստանում ապաստան հայցելու ընթացակարգի մասին իրազեկելուն, քրեակատարողական հիմնարկի վարչակազմին հասցեագրված դիմումները, բողոքները, առաջարկությունները, ինչպես նաև քաղաքացիական գործարքներին մասնակցելու վերաբերյալ փաստաթղթերը թարգմանելուն, ազատազրկված անձանց հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացմանը:

27.ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 1-ի թիվ 204-Ն որոշմամբ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կառավարումն իրականացվել է Արդարադատության, իսկ ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 27-ի թիվ 614-Ն որոշմամբ՝ Առողջապահության նախարարության կողմից:

ցել ենք, որ համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ նշված խնդիրներն առավել սուր են արտահայտվել: Դրանց ավելացել են իրենց և հարազատների վարակվելու կամ մահանալու վախը, անազատության պայմաններում կենցաղի կազմակերպման դժվարությունները, առաջին անհրաժեշտության իրերի բացակայությունը կամ սղությունը, քննչական կամ դատավարական գործողությունների հետաձգումը, խափանման միջոցի կամ պատժատեսակի փոփոխման անհնարինությունը, առողջապահական ծառայությունների սահմանափակումը, որոնք առաջացրել են անորոշության և անզորության զգացողություն: Տեսակցությունների արգելքի կամ դրանց ոչ լիարժեք տրամադրման, վերասոցիալականացման միջոցառումների ժամանակավոր դադարեցման պատճառով կրճատվել են կենդանի շփումները, ինչն իր հերթին դարձել է ինքնազգացողության վատթարացման կամ տրամադրության անկման պատճառ:

Կիսուրս, ամուսինս և աղջիկս վարակվել են: Դա շատ վատ ա ազդել ինձ վրա: Ուզում էի՝ օգնած լինեի, բայց չէի կարող գնալ, տեսնել: Մի հատ զանգ կամ տեսազանգ, ու էլ ոչ մի տեսակի հնարավորություն չկար: Ինձ համար կարևոր էր՝ իմանայի, որ ընտանիքիս հետ ամեն ինչ նորմալ ա: Էդ պահին մտածում էի՝ գոնե իրենց ձայնը լսեի ու առողջություն ցանկանայի: Ոչ մի բանով չէի կարող օգնել:

Կին դատապարտյալ, կանանց տեղամասի մասնաշենք

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված անձանց հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին սահմանելու ժամանակահատվածում կազմակերպվել են տվյալ պահին գործող սահմանափակումների պահանջներին համապատասխան: Շփումների և անհատական ընդունելությունների ժամանակ պահպանվել է սոցիալական հեռավորություն, ազատազրկված անձինք և համապատասխան մասնագետները կրել են անհատական պաշտպանիչ միջոցներ, օգտագործել են ախտահանող նյութեր:

Հոգեբանների շփումը շատ սահմանափակ է եղել: Միայն անհրաժեշտության դեպքում ենք ընդունելություններ կատարել կանանց հետ՝ պահպանելով բոլոր տեսակի նորմերը, որոնք նախատեսված էին այդ ժամանակահատվածում: Բոլորն ունեին վախ, տագնապ, որ կվարակվեն: Ունեին նաև ինֆորմացիայի պակաս: Հիմնական

ինֆորմացիան իրենք դրսից են ստանում իրենց հարազատներից: Ամեն ինչ արվել է, որ այդ ամեն ինչը նվազեցվի, որպեսզի իրենց ավելի ապահով զգան, որովհետև այդ ժամանակ ապահովության զգացողությունն ամենակարևորն էր:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Մտահոգիչ է այն, որ հոգեբանների համար իրականացվող մասնագիտական վերապատրաստման դասընթացները չեն ներառել համավարակի պայմաններում մասնագիտական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ թեմաներ: Բացի այդ, մշտադիտարկման այցի ժամանակ նկատել ենք, որ հոգեբանի՝ կանանց տեղամասի մասնաշենքում տեղակայված սենյակն ապահովված չէ առանձին սանհանգույցով և մշտական հոսող ջրով: Անհրաժեշտության դեպքում մասնագետն օգտվում է առաջին հարկի լոգարանին կից տեղակայված սանհանգույցից և լվացարանից: Հոգեբանի՝ մեկուսարանի մասնաշենքում տեղակայված սենյակում նկատել ենք բավարար գույքով ապահովման, սենյակի և ներկառուցված սանհանգույցի սանիտարահիգիենիկ բավարար վիճակի ապահովման և վերանորոգման հետ կապված խնդիրներ: Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ հիմնարկում 2022 թվականին հոգեթերապևտիկ սենյակ է կառուցվել[28], ինչից հետո մեկուսարանի սենյակը չի շահագործվել: Ստացվում է, որ ազատազրկված կանանց և անչափահասների հետ հոգեբանական աշխատանքներն այնպիսի պայմաններում են կազմակերպվել, որոնք մտահոգիչ են համավարակի ժամանակ ոչ միայն նրանց, այլև նշված մասնագետների առողջության պահպանման և անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:

28.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ սենյակը կառուցվել և կահավորվել է Եվրոպայի խորհրդի աջակցությամբ: Սենյակի հարդարումն իրականացվել է թերապևտիկ աշխատանքին համապատասխան հատուկ լուծումներով՝ հագեցած ինչպես անհատական, այնպես էլ խմբային թերապիա անցկացնելու հնարավորությամբ: Սենյակի կահավորմանը զուգահեռ՝ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացվել են ինչպես «Աբովյան», այնպես էլ այլ քրեակատարողական հիմնարկների հոգեբանների մասնագիտական վերապատրաստումներ թերապևտիկ աշխատանքի (այդ թվում արտ-թերապիայի) հմտությունները զարգացնելու նպատակով:

Անվանական հաշվառման, զննության և խուզարկության կազմակերպումը

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված անձանց անվանական հաշվառման, նրանց անձնական, ինչպես նաև խցերի և կացարանների խուզարկության, իրերի և առարկաների զննության և առգրավման գործընթացներն իրականացվել են սահմանված կարգով[29]՝ պահպանելով տվյալ պահին գործող սահմանափակումների պահանջները, սանիտարական և հակահամաճարակային նորմերը: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում աշխատակիցները նշված գործընթացներն իրականացնելիս պահպանել են սոցիալական հեռավորություն, օգտագործել են անհատական պաշտպանիչ միջոցներ և ախտահանող նյութեր: Մեզ հետ զրույցում կանայք և անչափահասներն այս առումով բողոքներ չեն ներկայացրել: Սակայն մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ անձնական զննության անցկացման համար նախատեսված սենյակը, որը տեղակայված է հսկիչ-անցագրային կետի հարևանությամբ, փոքր է, չունի պատուհան, ջեռուցման և օդափոխության համակարգ, ինչը մտահոգիչ է համավարակի ժամանակ սոցիալական հեռավորության պահպանման և սանիտարահիգիենիկ վիճակի ապահովման տեսանկյունից: Նաև տեղեկացել ենք, որ աշխատակիցների համար չեն կազմակերպվել համավարակի ժամանակ նշված գործառույթների կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության դասընթացներ, ինչը կարևոր է անչափահասների, հղիների, մանկահասակ երեխաների և նրանց մայրերի շրջանում համավարակի կանխարգելման տեսանկյունից:

29.«Քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 194-Ն հրաման: «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, որն ուժը կորցրել է 2023 թվականի ապրիլի 24-ին:

Փոխադրումների կազմակերպումը

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հիմնարկից հիմնարկ, քաղաքացիական բժշկական հաստատություններ, դատարաններ և քրեական վարույթ իրականացնող մյուս մարմիններ ազատազրկված անձանց փոխադրումները կազմակերպելիս պահպանվել են տվյալ պահին գործող սանիտարական և հակահամաճարակային նորմերը: Գրավոր հարցումների միջոցով տեղեկացել ենք, որ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ուղեկցումների բաժնի և ոստիկանության ուղեկցող ստորաբաժանման աշխատակիցները, ինչպես նաև ազատազրկված անձինք ապահովվել են անհատական պաշտպանիչ միջոցներով: Կատարվել է ջերմաչափում, ախտանշանների առկայության դեպքում ձեռնարկվել են կանխարգելիչ միջոցներ, կատարվել է թեստավորում: Ուղեկցող մեքենաներում հնարավորինս պահպանվել է սոցիալական հեռավորություն, դրանք օդափոխվել և ախտահանվել են Առողջապահության նախարարության կողմից սահմանված ժամկետներում և ախտահանող նյութերի օգտագործմամբ: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ ազատազրկված կանանց և անչափահասների փոխադրումները կազմակերպվել են նույն սկզբունքով: Սակայն մեզ հետ զրույցում կանայք դժգոհել են, որ համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների պատճառով քննչական կամ դատավարական գործողությունները հետաձգվել են: Բացի այդ, ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ 2020 թվականի կեսերից ոստիկանությունը հրաժարվել է դատապարտյալներին փոխադրել դատարաններ և վարութային գործողությունների իրականացման այլ վայրեր՝ պատճառաբանելով, որ դա դուրս է իր լիազորությունների շրջանակից: Նման լիազորություն վերապահված չէր նաև Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ուղեկցումների բաժնին: Խնդիրը կարգավորվել է 2023 թվականին[30], սակայն մտահոգիչ է այն, որ չի դիտարկվել համավարակի ժամանակ նշված գործողություններին

30.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի հուլիսից դատապարտյալների փոխադրումները դատարաններ և վարութային գործողությունների կատարման այլ վայրեր, այդ վայրերում նրանց պահպանությունը և հսկողությունն իրականացնում են Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ուղեկցումների բաժինը և քրեակատարողական հիմնարկների պահպանության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումները: Այդ գործառույթի արդյունավետ իրականացման նպատակով Քրեակատարողական ծառայությունը ձեռք է բերել 10 հատուկ նշանակության նոր ավտոմեքենա՝ կահավորված և հարմարեցված փոխադրումների համար:

ազատազրկված կանանց և անչափահասների մասնակցությունը հեռավար ապահովելու հարցը՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական առանձնահատկությունները:

Ազատազրկված անձանց տեղաշարժը չի սահմանափակվել, այլ իրականացվել է հրատապ դեպքերում:

Քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ

Կանանց տեղափոխումը նույն ձևով է իրականացվել: Այստեղ պարտադիր ջերմաչափվել են, դիմակ են կրել: Հետո ջերմաչափվել են և ներս են մտել: Սակայն փոխադրումները հիմնականում հետաձգվել են:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Սննդի ապահովումը

Ազատազրկված անձանց սննդի ապահովումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Գործընթացը մեկնարկվել է 2019 թվականի տարեվերջին և 2020 թվականի հունիսից ներդրվել է բոլոր քրեակատարողական հիմնարկներում, այդ թվում՝ «Աբովյան» ՔԿՀ-ում: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ մասնավոր ընկերության աշխատակիցների կողմից համավարակի ներթափանցման խնդիրներ չեն եղել, քանի որ հիմնարկ մատակարարվում է պատրաստի սնունդ՝ նախաճաշի, ճաշի և ընթրիքի համար նախատեսված ժամերին: Սննդի ընդունման գործընթացում պահպանվել են հիգիենայի կանոնները: Մեկուսարանի մասնաշենքում կանայք և անչափահասները սնունդն ընդունել են խցերում: Սնունդ բաժանող կին դատապարտյալն ապահովվել է անհատական պաշտպանիչ միջոցներով: Մեզ հետ զրույցում կանայք նշել են, որ խցերն ապահովված չեն տաք ջրով, ինչը դժվարացնում է ափսեները և մյուս սպասքը լվանալը: Հետևաբար նախընտրում են, որպեսզի իրենց սնունդը մեկանգամյա օգտագործման տարաներով տրամադրվի: Կանանց տեղամասի մասնաշենքում սնունդը տրամադրվել է ճաշարանում, որը յուրաքանչյուր սննդընդունումից հետո ախտահանվել է, տեղադրվել են ախտահանող նյութերով տարաներ: Տեղեկացել ենք, որ սննդի ընդունման ժամերին հնարավորինս պահպանվել է սոցիալական հեռավորություն, թեև հերթեր չեն առաջացել, ինչը պայմանավորված է վերջին տարիներին կին դատապարտյալների թվի նվազեցմամբ:

Սակայն արձանագրել ենք, որ սնվելու եկած դատապարտյալների համար ճաշարանում լվացվելու հարմարանք չկա, ինչը մտահոգիչ է համավարակի ժամանակ անձնական հիգիենայի պահպանման տեսանկյունից:

Մեզ հետ զրույցում կանայք դժգոհել են սննդի որակից՝ նշելով, որ ուտելիքն անհամ է, անալի և վատ եփված: Իրենք ստիպված են լինում նորից եփել այն: Եղել են դեպքեր, երբ կոտլետի կամ հավի մսի մեջ արյուն են նկատել: Բողոքել են, որ չի ապահովվում սննդի բազմազանությունը, հազվադեպ են տրամադրում վիտամիններ պարունակող սնունդ և մրգեր: Մտահոգիչ է այն, որ հաշվի առնելով ազատազրկված կանանց և անչափահասների խոցելիությունը՝ չի դիտարկվել նրանց տրամադրվող սննդի չափաբաժինները կամ կալորիականությունը համավարակի ժամանակ ավելացնելու հարցը: Բացի այդ, Արդարադատության նախարարության կամ Քրեակատարողական ծառայության կողմից չի կատարվել մասնավոր ընկերության կողմից մատակարարվող սննդի որակի և կալորիականության փորձաքննություն[31]: Պարզել ենք նաև, որ մասնավոր ընկերության կողմից սննդի պատրաստման և մատակարարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրենսդրական կարգավորումներ կամ մեխանիզմներ նախատեսված չեն: Նշվածից բխում է, որ ազատազրկված անձանց իրավունքների հնարավոր խախտումները սննդի ապահովման գործընթացում կարող են չբացահայտվել, ինչը մտահոգիչ է համավարակի ժամանակ, երբ անվտանգության նկատառումներից ելնելով՝ քրեակատարողական հիմնարկներում վերահսկողությունը և մշտադիտարկումը հեռավար կամ սահմանափակ է իրականացվում:

Երբ հանձնուքներն արգելվել էին, կանայք դժգոհում էին, որ սուրճ կամ թեյ չունեն, շաքարավազը քիչ է: Բայց հետո հարմարվել են իրավիճակին:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Մի տարի չեն թույլատրել հանձնուք ստանալ: Ստեղի սննդով ենք բավարարվել: Բայց դե ինչ տան սարքածը, ինչ ստեղինը: Ճաշերը հում են, հետո փքվածություն են առաջացնում: Եթե տնից չբերենք, միայն ստեղի տվածը չի հերիքի:

Կալանավորված կին, մեկուսարանի մասնաշենք

31.Նմանատիպ նախաձեռնությամբ 2021 և 2022 թվականներին հանդես է եկել Գլխավոր դատախազության Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման վարչությունը:

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ սնունդ մատակարարող մասնավոր ընկերությունը տարբեր հիվանդություններ ունեցող ազատազրկված անձանց ապահովում է դիետիկ սննդով, որը նշանակվում է բժշկական ցուցման հիման վրա: Դիետիկ ճաշատեսակները պատրաստվում են ըստ Քրեակատարողական բժշկության կենտրոնի կողմից ներկայացված 4 նազոլոգիական խմբերի և մատակարարվում քրեակատարողական հիմնարկներ կամ տարբեր բժշկական հաստատություններ, որտեղ տվյալ պահին բուժում են ստանում ազատազրկված անձինք: Սակայն ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ ազատազրկված անձանց դիետիկ սննդով ապահովելու հարցն օրենսդրական մակարդակում կարգավորվել է 2023 թվականին, երբ Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանվել են դիետիկ սննդի չափաբաժինները և դիետիկ սննդով ապահովման կարիք առաջացնող հիվանդությունների ցանկը[32]:

Ըստ հիվանդությունների՝ ամսական կտրվածքով կազմում ենք դիետիկ սննդի ցուցակ և տալիս քրեակատարողական ծառայությանը՝ խնդրելով փոխանցել սնունդ մատակարարող ընկերությանը: Անձը կարող է հրաժարվել դիետիկ սննդից, սակայն բժիշկը դիետիկ սննդի ցուցում չտալու իրավունք չունի, քանի որ դա բուժական գործընթացի մի մասն է: Եթե անձը հրաժարվում է դիետիկ սննդից, իր դիմումի համաձայն հանում ենք ցուցակից:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Բացի այդ, պարզել ենք, որ իրենց մայրերի հետ «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող մանկահասակ երեխաներին մանկական սննդով ապահովելու հարցը գործնականում կարգավորվել է 2022 թվականից: Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ սննդի մատակարարման պայմանագրի շրջանակներում համաձայնագիր է կնքվել, և մանկահասակ երեխաներին մանկական սնունդը տրամադրվել է՝ առանց պայմանագրով սահմանված ֆինանսական միջոցներում փոփոխություն կատարելու: Մանկահասակ երեխաներին մանկական սննդով ապահովելը նախատեսված է նաև սննդի մատակարարման՝ 2023 թվականի պայմանագրի տեխնիկա-

32.«Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ հիգիենայի պարագաների չափաբաժինները, հանդերձանքի, անկողնային պարագաների չափաբաժինները և դրանց օգտագործման ժամկետները, սննդամթերքի միջին և մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 23-ի թիվ 245-ն որոշում:

կական բնութագրով[33]: Տարբեր հիվանդություններ ունեցող ազատազրկված անձանց, այդ թվում՝ կանանց, ինչպես նաև իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաներին համապատասխանաբար դիետիկ և մանկական սննդով ապահովելու հետ կապված թերացումները մտահոգիչ են համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ նրանց սննդառության ապահովման և առողջության պահպանման տեսանկյունից:

Մանկահասակ երեխաներին տրամադրվել է նույն սնունդը, ինչ ազատազրկված անձանց: Մեզ հետ զրույցում մայրերը նշել են, որ երեխաներին տրվող սննդում հազվադեպ ավելացվել է կաթ, կաթնաշոռ կամ թթվասեր:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ

Երեխայի՝ ճաշեր ուտելու տարիքն է, բայց չեմ կարողանում տալ, քանի որ հում սնունդ չի թույլատրվում: Միայն հիպի կաշան է: Երեխաս արդեն 1,5 տարեկան է, բայց դեռ բանջարեղենի համը չգիտի:

Կին դատապարտյալ, մեկուսարանի մասնաշենք

Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ կանայք հանձնուքով փոխանցվող սննդի պահպանման հետ կապված դժվարություններ են ունեցել: Երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում արգելվել է հանձնուքների ընդունումը, այնուհետև թույլատրվել է 1 անձի կողմից շաբաթական 1 անգամ 1 հանձնուք ստանալ: Շաբաթական 1 անգամ հանձնուք փոխանցելիս հարազատները մեծ քանակությամբ սնունդ են բերել: Որոշ սննդատեսակներ փչացել են, քանի որ կանայք չեն հասցրել սպառել: Եփված սնունդը չեն կարողացել մի քանի օրից ավել պահել, քանի որ խցերի սառնարանները փոքր են, իսկ ընդհանուր սառնարանում հնարավոր չէ շատ սնունդ պահել: Նաև արձանագրել ենք, որ հանձնուքների ընդունման սենյակում ջեռուցման և օդափոխության համակարգ տեղադրված չէ: Անհրաժեշտութ-

33.Ըստ «Պետության կարիքների համար ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1 պայմանագրի 2022 թվականի հունիսի 14-ին կնքված թիվ 3 Համաձայնագրի՝ 2022 թվականի հունիսից մանկահասակ երեխաների սնունդը տրամադրվում է «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպաիրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 815-Ն որոշման պահանջների համաձայն:

յան դեպքում էլեկտրական ջեռուցիչ է միացվում: Ինչ վերաբերում է հանձնուք փոխանցող անձանց, ապա նրանց համար սպասասրահ նախատեսված չէ: Նրանք անհրաժեշտության դեպքում օգտվում են դրսում տեղադրված նստարաններից, որոնք ապահովված չեն եղանակային վատ պայմաններից պաշտպանող ծածկերով: Սենյակն ապահովված չէ սանհանգույցով, լվացվելու կամ խմելու ջրով: Նշված խնդիրները մտահոգիչ են համավարակի ժամանակ հանձնուք փոխանցող անձանց առողջության պահպանման և անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:

Լոգանքի և հիգիենայի ապահովումը

Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներն ապահովված են տաք և սառը ջրամատակարարմամբ: Սակայն հաշվի առնելով տեղակայման վայրերի տարածաշրջանային առանձնահատկությունները՝ ոչ բոլոր հիմնարկներում է հնարավոր ապահովել ջրամատակարարումը: Այդ նպատակով հիմնարկներում տեղադրված են պահեստային ջրի մեծածավալ բաքեր, որոնց օգնությամբ իրականացվում է սառը ջրամատակարարումը, իսկ տաք ջուրն ապահովվում է արևային էներգիայի միջոցով՝ հատուկ արևային տաքացուցիչների և էլեկտրական այլ սարքերի միջոցով: Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Աբովյան» ՔԿՀ-ում շուրջօրյա ջրամատակարարումն ապահովվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից: Սառը ջուրը մղվում է կենցաղային բոլոր հանգույցներ և օգտագործվում ըստ նշանակության: Տաք ջրամատակարարումն իրականացվում է կենտրոնական կաթսայատնից: Ջրամատակարարումը խաթարվել է միայն վթարային անջատումների պատճառով, ինչը հնարավորինս արագ վերականգնվել է: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում տաք ջուրը հասանելի է միայն լոգարաններում և միացվում է լոգանքի օրերին: Մեզ հետ զրույցում կանայք նշել են, որ մեկուսարանի մասնաշենքում առավոտյան ժամերին սառը ջուրը երբեմն անջատվել է կամ հոսքը նվազել է: Կանանց տեղամասի մասնաշենքում նկատել ենք, որ կացարաններն ապահովված չեն լվացվելու հարմարությամբ: Կանայք նշել են, որ անհրաժեշտության դեպքում

օգտվում են լոգարաններում տեղակայված լվացարաններից: Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված անձանց, այդ թվում կանանց և անչափահասների լոգանքը տրամադրվել է յուրաքանչյուր հիմնարկի օրվա կանոնակարգով սահմանված ժամկետներում և կարգով՝ խստագույնս պահպանելով հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը: Նրանք ապահովվել են շաբաթվա մեջ առնվազն 1 անգամ ցնցուղով լոգանք ընդունելու հնարավորությամբ, որի տևողությունը կազմել է առնվազն 15 րոպե[34]: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ շաբաթվա մեջ մեկանգամյա լոգանքը բավարար չէ կանանց համար, ինչը պայմանավորված է նրանց կենսաբանական առանձնահատկություններով: Ոչ լոգանքի օրերին իրենց խնամքը կազմակերպելու համար կանայք թեյնիկով են ջուր տաքացնում, քանի որ խցերը և կացարաններն ապահովված չեն տաք ջրով, ավելին, կացարանները չունեն ներկառուցված լոգասենյակներ: Մանկահասակ երեխաների լոգանքը կազմակերպելիս տաք ջրի հասանելիությունից բացի կանայք դժվարություններ են ունեցել նաև լոգարանների պատճառով: Երեխաների համար առանձնացված լոգարաններ չկան, իսկ առկա լոգարանները հարմարեցված չեն նրանց կարիքներին: Մեզ հետ զրույցում կանայք նշել են, որ հանձնուքների արգելքի և սահմանափակման ժամանակահատվածում անձնական հիգիենայի պարագաները խնայողաբար են օգտագործել: Մտահոգիչ է այն, որ հաշվի առնելով ազատազրկված կանանց և անչափահասների խոցելիությունը՝ չի դիտարկվել նրանց տրամադրվող հիգիենայի պարագաների չափաբաժինները համավարակի ժամանակ ավելացնելու հարցը: Ճիշտ է, անհրաժեշտության դեպքում նրանք այդ պարագաները գնել են հիմնարկին կից գործող կրպակից, սակայն երբեմն ֆինանսական միջոցները չեն բավարարել, քանի որ ստիպված են եղել գնել հեռախոսաքարտեր և առաջին անհրաժեշտության սնունդ: Նշված խնդիրները մտահոգիչ են ոչ միայն կենցաղի կազմակերպման, այլև համավարակի ժամանակ կանանց և մանկահասակ երեխաների անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:

Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ մեկուսարանի մասնաշենքում գործում է 4, կանանց տեղամասի մասնա-

34.«Աբովյան» ՔԿՀ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված բոլոր կանանց և անչափահասներին շաբաթվա մեջ 2 անգամ լոգանք ընդունելու հնարավորություն տրվել է 2023 թվականի տարեսկզբից: Մինչ այդ նման հնարավորություն ունեին միայն կանանց տեղամասի մասնաշենքում պահվող կանայք:

շենքում՝ 2 լոգարան, որոնք լոգանքից առաջ և հետո սահմանված կարգով ախտահանվել են: Մեկուսարանի մասնաշենքում սանհանգույցները տեղադրված են խցերի ներսում: Կանանց տեղամասի մասնաշենքի կացարաններում ներկառուցված սանհանգույցներ չկան: Դրանք տեղակայված են լոգարաններին կից՝ առաջին և երկրորդ հարկերում: Նշված տարածքներն ախտահանվել են սահմանված կարգով և նյութերով, պահպանվել են հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը, բացի այդ, հերթեր չեն առաջացել, քանի որ վերջին տարիներին կանանց և անչափահասների թիվը նվազել է: Մեր կողմից արձանագրված խնդիրները վերաբերել են լոգասենյակներում և սանհանգույցներում վերանորոգման աշխատանքներ կատարելուն և սանիտարահիգիենիկ բավարար վիճակ ապահովելուն, ինչը կարևոր է համավարակի ժամանակ անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:
Արձանագրել ենք նաև, որ հիմնարկն ապահովված է ազատազրկված անձանց լվացքի կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններով: Այդ նպատակով մեկուսարանի և կանանց տեղամասի մասնաշենքերում լոգարաններին կից լվացքատներում տեղադրված են լվացքի մեքենաներ: Սակայն տեղեկացել ենք, որ նշված մեքենաներով լվացվում են կանանց և անչափահասների անկողնային պարագաները: Իրենց անձնական հագուստը, մանկահասակ երեխաների անձնական հագուստը և անկողնային պարագաները կանայք խցում կամ կացարանում, լոգանքի կազմակերպման օրերին՝ նաև լոգարանում ձեռքով են լվանում: Քանի որ չորանոցներ չկան, լվացքը տաք եղանակներին դրսում են չորացնում, իսկ ցուրտ եղանակներին՝ խցի կամ կացարանի ներսում: Մտահոգիչ է այն, որ ցուրտ եղանակներին լվացքը ձեռքով, առավել ևս՝ խցում կամ կացարանում լվանալը և չորացնելը կարող է դառնալ հիվանդացության պատճառ՝ կանանց և մանկահասակ երեխաներին խոցելի դարձնելով համավարակի նկատմամբ:

Արտաքին աշխարհի հետ կապը

Ազատազրկված անձանց հետ կարճատև և երկարատև տեսակցությունները երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում կամ արգելվել են, կամ տրամադրվել են սահմանափակումներով, կամ դրանց տրամադրման համար

սահմանվել են հատուկ ընթացակարգեր՝ պատվաստման կամ ՊՇՌ հետազոտության վկայականի ներկայացում: Սակայն հաշվի առնելով արտաքին աշխարհի հետ կապի կարևորությունը՝ ազատազրկված անձանց ցանկությամբ կարճատև տեսակցությունները փոխարինվել են տեսազանգով, այդ ժամանակահատվածում ավելացվել են հեռախոսազանգերի և տեսազանգերի քանակը և տևողությունը, ինչպես նաև տեսազանգից օգտվելու հնարավորություն է տրվել բոլոր ազատազրկված անձանց[35]: Նշված ժամանակահատվածում մանկատներում և խնամքի հաստատություններում երեխաներ ունեցել են միայն ազատազրկված կանայք: Նրանց տեսակցությունը ևս հեռավար տարբերակով է կազմակերպվել[36]:

Մեր ցուցումով առաջին անգամ տեսակցությունները սահմանափակվել են: Երբ առաջին հիվանդը հայտնաբերվել է «Արմավիր» ՔԿՀ-ում, հրահանգել ենք, որ տեսակցություններն արգելվեն:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Տեսակցությունների արգելքի հետ կապված դժգոհություններ եղել են, բայց այլ տարբերակ չունեինք, պետք էր սահմանափակել, քանի որ հակառակ դեպքում հետևանքները ծանր կլինեին:

Քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ

Սահմանափակվել է դրսի հետ կապը: Տեսակցություններն ամբողջովին հանվել են: Փոխարենն ավելացվել է տեսազանգի հնարավորությունը, որպեսզի կարողանան դրսի, իրենց հարազատների հետ կապը մաքսիմում պահել: Բայց տեսազանգը չի կարող փոխարինել իրենց հարազատների հետ կենդանի շփմանը: Կան երեխամայրեր, ովքեր Էստեղից շատ հոգատար են վերաբերվում իրենց դրսի երեխաների դաստիարակությանը, դպրոց հաճախելիությանը: Համավարակը բացասական

35.«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ տեսազանգից կարող էին օգտվել օտարերկրացի ազատազրկված անձինք, քանի որ նրանց մերձավոր ազգականները չէին կարող տեսակցել, և այն ազատազրկված անձինք, որոնց մերձավոր ազգականները չէին կարող օգտվել կարճատև տեսակցությունից: Որոշումն ուժը կորցրել է 2023 թվականի ապրիլի 24-ին: «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ այդ հնարավորությունից կարող են օգտվել բոլոր ազատազրկված անձինք: Որոշումն ուժի մեջ է մտել 2023 թվականի ապրիլի 27-ին:

36.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ նշված հաստատություններում 2020 և 2021 թվականներին 2-ական երեխաներ են ունեցել համապատասխանաբար 2 և 3 կին: Ազատազրկված կանանց և անչափահասներին 2020 և 2021 թվականներին տրամադրվել է համապատասխանաբար 324 և 461 կարճատև, 14 և 31 երկարատև տեսակցություն: Նրանք հեռախոսազանգից օգտվել են համապատասխանաբար 20356 և 20652, տեսազանգից՝ 749 և 434 անգամ:

հետևանք է ունեցել երեխաների դաստիարակության, ընտանեկան փոխհարաբերությունների վրա: Տեսակցությունների արգելքի պատճառով սկզբնական շրջանում հոգեկան վիճակի սրացում նկատվել է, սակայն համակերպվել են, երբ տեսել են, որ այլ տարբերակ չկա:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Ամսվա ընթացքում 4 ժամ տևողությամբ կարճատև տեսակցությունը, այսինքն՝ կենդանի շփումը, փոխարինվել է ամսվա մեջ 2 անգամ 20 րոպե տևողությամբ տեսազանգով: 40 րոպե տևողությամբ տեսազանգը և 4 ժամ տևողությամբ կենդանի շփումը, բնականաբար, համեմատելի չեն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ

Հղի էի, երբ տեսակցություններն արգելվեցին: Մեկ տարուց ավել մամայիս ու մյուս էրեխեքիս չեմ տեսել: Դա ամենամեծ պատիժն էր:

Կին դատապարտյալ, մեկուսարանի մասնաշենք

Մենք տեսակցության չենք գնացել: Տեսազանգեր ենք ունեցել: Այդպես ենք ընտանիքների հետ կապ հաստատել: Երեխաների, ընտանիքի կարիքը միշտ ունես: Կուզես ամեն րոպե իրենց տեսնես, շփվես, բայց դե կար արգելափակում:

Կին դատապարտյալ, կանանց տեղամասի մասնաշենք

Ազատազրկված կանայք և անչափահասները մեզ հետ զրույցում հիմնականում դժգոհել են հեռախոսաքարտերի սակագներից: Նրանք նշել են, որ 1 քարտն արժե 1200-1500 դրամ, ինչն իրենց համար թանկ է: Անհրաժեշտության դեպքում դրանք ձեռք են բերել հիմնարկին կից գործող կրպակից, սակայն երբեմն ֆինանսական միջոցները չեն բավարարել, քանի որ հանձնուքների արգելքի և սահմանափակման ժամանակ կրպակից գնել են նաև անձնական հիգիենայի պարագաներ և առաջին անհրաժեշտության սնունդ: Շատերի հարազատները համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների պատճառով զրկվել են աշխատանքից և չեն կարողացել օգնել հեռախոսաքարտերի ձեռքբերման հարցում, իսկ պետության կողմից այդ ժամանակահատվածում անվճար հեռախոսաքար-

տեր չեն տրամադրվել[37]: Ի լրումն նշվածի՝ ազատազրկված օտարերկրացի կանանց համար դժվարություն է առաջացրել Հայաստանի և իրենց քաղաքացիության երկրի՝ տարբեր ժամային գոտիներում լինելը: Նրանց թույլատրվել է հեռախոսազանգից և տեսազանգից օգտվել աշխատանքային օրերին և ժամերին: Մտահոգիչ է այն, որ համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ նրանց համար բացառություններ չեն նախատեսվել[38]:

Կանայք դժգոհել են հեռախոսակապից՝ նշելով, որ գին և տրամադրվող բոպե հարաբերակցությունը բավարար չէ: Նրանք դժգոհել են նաև քարտերի բարձր սակագներից:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված անձանց նամակագրության, բաժանորդագրության և նոր գրքերի ստացման գործընթացը երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում չի արգելվել կամ սահմանափակվել՝ բացառությամբ հանձնուքի միջոցով փոխանցման դեպքերի: Դրանց մակերեսներն ախտահանվել են քլորի հիմքով կամ 60-80 տոկոս սպիրտ պարունակող ախտահանող նյութերի կիրառմամբ: Սակայն մեզ հետ զրույցում կանայք նշել են, որ աշխատակիցներն իրենց համոզել են բողոքների մասին բարձրաձայնել ոչ թե գրավոր, այլ՝ բանավոր: Իսկ գրավոր ձևով ներկայացված նամակներն ընթերցել են կամ չեն փոխանցել հիմնարկի վարչակազմին: Տեսակցությունների արգելքի ժամանակ արտաքին աշխարհի հետ կապ պահելու, իրենց իրավունքների խախտումների մասին բարձրաձայնելու առավել անվտանգ միջոցը նամակագրությունն է: Հետևաբար նշված խնդիրների առկայությու-

37.«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ազատազրկված կանանց և անչափահասներին Հայաստանում կանանց հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ 2020 թվականին տրամադրել է 150 անվճար հեռախոսաքարտ: Ազատազրկված անձանց ամսվա մեջ 1 անգամ պետական միջոցների հաշվին հեռախոսակապից անվճար օգտվելու հնարավորություն նախատեսվել է Քրեակատարողական նոր օրենսգրքով, որը, սակայն, վերաբերում է քաղաքային զանգերին: Օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:

38.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ազատազրկված անձանց և Հայաստանից տարբերվող ժամային գոտիներում գտնվող երկրներում իրենց հարազատների միջև հեռախոսակապի և տեսակապի միջոցով արտաքին աշխարհի հետ կապն ապահովվում է օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով, որ այդ դեպքում էական խոչընդոտող գործոններ առկա չեն: Հակառակ դեպքում (գիշերային ժամերին հեռախոսակապից կամ տեսազանգից օգտվելը) կխաթարվի քրեակատարողական հիմնարկի բնականոն գործունեությունը:

նը կարող է հավելյալ լարվածություն առաջացնել կանանց շրջանում: Արտաքին աշխարհի հետ ազատազրկված անձանց կապն ապահովելու համար քրեակատարողական հիմնարկներում նախատեսված են համապատասխան պայմաններ: Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հիմնարկներում տեղադրված է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 52 և «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի 61 հեռախոսակապ: 2018 թվականի տարեվերջին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ քրեակատարողական հիմնարկներին տրամադրվել են համակարգիչներ՝ համալրված տեսազանգ կատարելու համար անհրաժեշտ սարքավորումներով: Համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ ավելացվել են հեռախոսակապի միջոցները, իսկ տեսակապի միջոցների ավելացման անհրաժեշտություն չի առաջացել: Շահագործման ընթացքում առաջացած անսարքությունները ժամանակին վերացվել են: Մեկուսարանի և կանանց տեղամասի մասնաշենքերում տեղադրված է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 3 և «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի 7 հեռախոսակապ: Նախքան կանանց և անչափահասներին փոխանցելը՝ հեռախոսաքարտերն ախտահանվել են, իսկ հեռախոսային հանգույցների մոտ տեղադրվել են ախտահանող նյութերով տարաներ:

Հեռախոսաքարտերն ախտահանել են, հետո տվել մեզ: Հեռախոսների մոտ ալկոգել և խոնավ անձեռոցիկներ են եղել: Սակայն 1 քարտի տևողությունը 52 րոպե է: Օրվա մեջ 2 անգամ 15 րոպեով թույլ են տալիս օգտվել հեռախոսակապից: Մեկ քարտը հերիքում է մոտ 2 օր:

Կալանավորված կին, մեկուսարանի մասնաշենք

Տեսակապի տրամադրման համար «Աբովյան» ՔԿՀ-ում առանձնացված է 1 սենյակ, որը կահավորված է համակարգչով և անհրաժեշտ սարքավորումներով, տեղադրված է ջեռուցման համակարգ: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ սենյակն ախտահանվել է սահմանված կարգով և նյութերով: Ուղեկցող աշխատակիցը և ազատազրկված անձն ապահովվել են անհատական պաշտպանիչ միջոցներով, նրանց միջև պահպանվել է սոցիալական հեռավորություն: Սակայն արձանագրել ենք, որ սենյակն ապահովված չէ օդափոխության համակարգով և հոսող ջրով: Բացի այդ, սենյակը տեղակայված է մեկուսարանի և կանանց տեղամասի մասնաշենքերից դուրս մեկ այլ մասնաշենքում: Ցուրտ եղանակներին տեսա-

կապից օգտվելու համար մասնաշենքից մասնաշենք ուղեկցելը և օդափոխությունը պատուհանի միջոցով կատարելը կարող են հիվանդացության պատճառ դառնալ, իսկ հոսող ջրի բացակայությունը մտահոգիչ է համավարակի ժամանակ անձնական հիգիենայի պահպանման տեսանկյունից:
«Աբովյան» ՔԿՀ-ում գործում են մանկական ու կարճատև տեսակցության 1-ական և երկարատև տեսակցության 2 սենյակ, որոնք տեղակայված են հսկիչ-անցագրային կետի հարևանությամբ: Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ նշված սենյակներում առկա են պատշաճ կահավորման և առկա գույքի ոչ բարվոք վիճակում լինելու հետ կապված խնդիրներ: Կարճատև տեսակցության և մանկական սենյակներում չկա լվացվելու և սանհանգույցից օգտվելու հարմարանք: Երկարատև տեսակցության սենյակներում, ներկառուցված խոհանոցային հատվածներում և լոգարաններում նկատել ենք վերանորոգման և սանիտարահիգիենիկ պատշաճ վիճակի ապահովման հետ կապված խնդիրներ: Ճիշտ է, տեսակցությունների արգելքի ժամանակ նշված սենյակները չեն օգտագործվել, սակայն բավարար շենքային և սանիտարահիգիենիկ պայմաններ ապահովելը կարևոր է ոչ միայն ազատազրկված, այլև նրանց տեսակցության եկած անձանց առողջության պահպանման և անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:

Զբոսանքը

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ ազատազրկված անձանց զբոսանքը չի արգելվել կամ սահմանափակվել, թեև Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանվել էր, որ երկրում արտակարգ դրություն հայտարարելու ժամանակահատվածում այն կարող է արգելվել: Ազատազրկված անձինք զբոսանքից օգտվել են՝ պահպանելով հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ կանանց տեղամասի մասնաշենքում կին դատապարտյալները զբոսանքից օգտվել են ցերեկային ժամերին՝ հնարավորինս պահպանելով սոցիալական հեռավորություն: Մեկուսարանի մասնաշենքում կանանց և անչափահասների զբոսանքը կազմակերպ-

վել է զբոսանքի համար նախատեսված ժամերին՝ ըստ խցերի[39]:

Մի խուցը զբոսնել է, տարածքն ախտահանվել է, հետո մյուս խուցն է զբոսնել: Եթե խցում 3 հոգի են, զբոսաբակում հայտնվել են այդ նույն 3 հոգին: Տարբեր խցերի անձանց միմյանց հետ չենք հանել զբոսանքի: Դա նաև Ներքին կանոնակարգով է սահմանված, որ մի խցի դատապարտյալները կամ կալանավորված անձինք մյուս խցի դատապարտյալների կամ կալանավորված անձանց հետ չեն կարող հանդիպել ոչ միջանցքում, ոչ զբոսաբակում:

Քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ

Սերտորեն համագործակցել ենք քրեակատարողական հիմնարկների հետ: Զբոսանքի ժամն ավարտվել է, ախտահանման միջոցառումներն արվել են, հետո մյուս խումբն է դուրս եկել զբոսանքի: Այդպիսով սահմանափակել ենք միմյանց միջև կոնտակտը:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի ներկայացուցիչ

Զբոսանքն արգելելու կամ սահմանափակելու կարիք չի առաջացել: Աշխատակիցներն են դրսից եկել, միշտ դիմակով են եկել, հեռավորություն են պահել:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Ազատազրկված կանանց և անչափահասների զբոսանքի համար մեկուսարանի մասնաշենքում նախատեսված է 4 զբոսախուց: Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ դրանք բավարար չեն բոլոր կանանց և անչափահասների՝ օրենսդրությամբ ամրագրված զբոսանքի իրավունքը պատշաճ ապահովելու համար: Ի լրումն կահավորման, առկա գույքի ոչ բարվոք վիճակում լինելու, աղբահանման և սանիտարահիգիենիկ ոչ բավարար պայմանների հետ կապված խնդիրների՝ նկատել ենք, որ առկա ծածկերը զբոսանքի դուրս եկած անձանց բավարար չափով չեն պաշտպանում եղանակային վատ պայմաններից: Բացի այդ, դրանք համալրված չեն անչափահասների համար նախատեսված խաղերով, ֆիզիկական վարժություններով կամ սպորտով զբաղվելու հարմարանքներով: Մանկահասակ երեխաների զբոսանքի համար նախատեսված բակը կանաչապատ է, սակայն մշտադիտարկման այցի ժամանակ նկատել ենք, որ այն համալրված չէ տարիքային զարգացմանը համապատասխանող

39.«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, կետեր 61-64: Որոշումն ուժը կորցրել է 2023 թվականի ապրիլի 24-ին:

խաղերով կամ ժամանցի այլ միջոցներով: Մեզ հետ զրույցում կանայք և անչափահասները նշել են, որ հաճախ են հրաժարվում զբոսանքից կամ նախատեսվածից քիչ են օգտվում: Նրանք զբոսանքից հրաժարվել են նաև համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ, թեև այն ժամանցի միակ հնարավորությունն էր[40]:

Զբոսաբակերում տեղադրված են աղբաման, նստարան և եղանակային վատ պայմաններից պատսպարվելու համար ծածկ: Ուրիշ ոչ մի զբաղմունքի միջոց այնտեղ չկա: Մարմնամարզության սարքեր չկան: Զբոսաբակերը նաև ոչ պատշաճ վիճակում են: Այնտեղ մշտապես արձանագրել ենք մաքրման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն: Կանայք էլ առանձնազրույցների ժամանակ նշել են, որ 15-20 րոպեից ավել չեն մնում զբոսաբակում: Ասում են՝ անելու բան չկա: Մանկահասակ երեխաների զբոսանքի կազմակերպման հետ կապված խնդիրներ են բարձրացրել մայրերը՝ նշելով, որ առանձին զբոսաբակի բացակայության պայմաններում դժվար է երեխայի հետ զբոսանքի դուրս գալ: Օրինակ, կանանցից մեկը նշել է, որ չի ցանկանում այլ կանանց դիտարկման ներքո երեխայի հետ զբոսանքի դուրս գալ, քանի որ ցանկանում է խուսափել լրացուցիչ հարցերից:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ

Երեխայի համար բանտում լինելը շատ դաժան է: Ոչ առողջ մանկություն է ապրում: Էստեղ առողջ մանկության համար ամեն ինչն էլ պակաս է: Առավոտյան ու երեկոյան 2 ժամ տանում եմ զբոսանքի: Բակում ի՞նչ կա՝ փոշի ու 3 հատ ծառ: Ամեն օր նույն բանն է տեսնում: Թթվածնի քաղց ունի:

Կին դատապարտյալ, մեկուսարանի մասնաշենք

Խցից դուրս ես գալիս, մտնում մի ուրիշ խուց, դուռը վրադ փակում են: Դրա զբոսանքը ո՞րն է: Ես չեմ իջնում զբոսանքի: Պատուհանի մոտից եմ մաքուր օդ շնչում: Էնտեղ զբաղվելու բան չկա: Եթե միայն մաքուր օդի համար պիտի իջնեմ, հենա պատուհանից եմ շնչում:

Կալանավորված կին, մեկուսարանի մասնաշենք

Գնումներն «Աբովյան» ՔԿՀ-ին կից գործող կրպակից

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվութ-

40.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականին «Աբովյան» ՔԿՀ-ում արձանագրվել է զբոսանքից հրաժարվելու 7650, իսկ 2021 թվականին՝ 6840 դեպք:

յան համաձայն՝ հիմնարկներին կից գործող կրպակներից գնումներ կատարելու գործընթացը համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ կազմակերպվել է հակահամաճարակային կանոնների պահպանմամբ: Գնումները կատարվել են անկանխիկ եղանակով: Հայտերն ընդունվել են շաբաթվա մեջ 1 անգամ՝ պահպանելով սանիտարական բոլոր կանոնները: Ընդունված հայտերի արդյունքում ձեռք բերված ապրանքներն ազատազրկված անձանց փոխանցվել են առնվազն 1 օր պահվելուց հետո՝ նվազեցնելու համար վիրուսի փոխանցման հավանականությունը: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում գնումները կազմակերպվել են նույն սկզբունքով[41]: Սակայն արձանագրել ենք, որ կրպակի միջոցով ձեռք բերվող ապրանքների գները շուկայականից թանկ են: Մտահոգիչ է այն, որ չի դիտարկվել գները համավարակի ժամանակ փոխելու հարցը: Բացի այդ, արձանագրել ենք, որ կրպակից գնումներ կատարելու էլեկտրոնային համակարգ ներդրված չէ, ինչը կարևոր է քրեակատարողական հիմնարկներ համավարակի ներթափանցումը կանխելու տեսանկյունից:

Կրպակի աշխատանքները նույն ձևով են իրականացվել: Կրպակը ստացել է ապրանքները, մանկական սենյակում 1 օր մնացել են, որ ժամանակ անցի, հետո բաժանենք:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Կրպակի գները համարյա դրսի գներ են, թանկ են: Ես միայն սուրճն եմ կրպակից գնել:

Կին դատապարտյալ, կանանց տեղամասի մասնաշենք

Աշխատանքը, կրթությունը և զբաղվածությունը

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ ազատազրկված անձանց, այդ թվում՝ կանանց աշխատանքային գործունեությունը երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում չի սահմանափակվել: Տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքները կազմակերպվել են ամենօրյա կտրվածքով՝ պահպանելով հիգիենայի խստացված կանոնները և

41.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականին «Աբովյան» ՔԿՀ-ում կրպակից օգտվել է 74, 2022 թվականին՝ 60 անձ:

անհրաժեշտ սոցիալական հեռավորություն: Այդ աշխատանքներում վարձատրվող և չվարձատրվող հիմունքներով ներգրավված անձինք ապահովվել են անհատական պաշտպանիչ միջոցներով և ախտահանող նյութերով: «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կողմից իրականացվող աշխատանքները դադարեցվել են[42]: Մեզ հետ զրույցում կանայք նշել են, որ կրակայրիչների և կարի արտադրամասերը չեն գործել, թեև իրենց աշխատելու ցանկությունը մեծ է: Նրանք նշել են, որ կարող էին կարի արտադրամասում դիմակներ և ձեռնոցներ կարել:

Ինչ վերաբերում է հիմնարկի տարածքից դուրս՝ այլ գործատուների մոտ աշխատող դատապարտյալներին, ապա նրանք համավարակի տարածման սկզբնական շրջանում աշխատանքի չեն հաճախել, ինչը պայմանավորված էր արտակարգ դրության պայմաններում գործող սահմանափակումներով, այնուհետև սահմանված կարգով տրամադրվել են կարճաժամկետ մեկնումներ: Կարճաժամկետ մեկնումից հրաժարվելու դեպքում դատապարտյալները հիմնարկներից են հաճախել աշխատանքի: Նրանց ելքը և մուտքը հիմնարկներ իրականացվել է՝ հաշվի առնելով այդ պահին գործող սահմանափակումների պահանջները, հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը[43]: Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ ելքի և մուտքի սահմանափակումների պատճառով հիմնարկների տարածքից դուրս՝ այլ գործատուների մոտ աշխատող դատապարտյալների, այդ թվում՝ կանանց շրջանում աշխատանքից հեռացվելու դեպքեր չեն արձանագրվել[44]:

Ընդառաջել ենք, կարճաժամկետ մեկնումներ ենք տրամադրել, որ իրենց ընտանիք-

42.«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կողմից իրականացվող այն աշխատանքները, որոնց հեռավար կազմակերպումն անհնար է, օրինակ, հացի արտադրությունում, ապահովվել են համապատասխան պաշտպանիչ և ախտահանող միջոցներով: Իրենց աշխատանքը շարունակել են հացի արտադրությունում ներգրավված 2 դատապարտյալ աշխատողները: Ժամանակավորապես դադարեցվել են դատապարտյալների ներգրավվածությամբ իրականացվող այնպիսի աշխատանքները, ինչպիսիք են կրակայրիչների կամ հանդերձանքի արտադրությունը: Ստեղծագործական աշխատանքներում ներգրավված դատապարտյալների հետ կարանտինային պայմաններում դադարեցվել են հանդիպումները: Հիմնադրամը ՀՀ սնանկության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՍՆԴ/1782/04/21 վճռով սնանկ է ճանաչվել:

43.Կարճաժամկետ մեկնումներ տրամադրելիս, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներ դատապարտյալների ելքը և մուտքն իրականացնելիս քրեակատարողական հիմնարկների վարչակազմն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշմամբ, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով սահմանված դրույթներով:

44.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 և 2021 թվականներին «Աբովյան» ՔԿՀ-ում վարձատրվող, չվարձատրվող և այլ գործատուի մոտ աշխատել է համապատասխանաբար 24 և 16, 20 և 20, 1 և 4 կին դատապարտյալ:

ներում լինեն, շփումներից խուսափեն: Սահմանափակումների պատճառով աշխատանքային հարաբերությունները չեն խախտվել: Եթե կարճաժամկետ մեկնում չեն ցանկացել, հիմնարկից են գնացել աշխատանքի:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի կողմից իրականացվող մինչև 19 տարեկան ազատազրկված անձանց հանրակրթական, ինչպես նաև «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագրերի ուսուցումը 2020 թվականի մարտի 13-ից դադարեցվել է, արգելվել է ուսուցչական անձնակազմի մուտքը քրեակատարողական հիմնարկներ: Սակայն ելնելով հանրակրթության իրականացման անհրաժեշտությունից և առաջնորդվելով հեռավար կրթության պահանջներով՝ 2020 թվականի մարտի 23-ից հանրակրթական ծրագիրն «Աբովյան», «Արմավիր» և «Սևան» ՔԿՀ-ներում իրականացվել է հեռավար անհատական կրթության կազմակերպման մեթոդաբանությամբ: Ուսուցիչները շաբաթական կտրվածքով կազմել և անչափահասներին են փոխանցել անհատական ուսուցման նյութեր: Արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի համագործակցության շրջանակներում անչափահասներին տրամադրվել են լրացուցիչ գրականություն, մարզական պարագաներ, զարգացնող և ժամանցային խաղեր: Բացի այդ, մշակվել և «Աբովյան» ՔԿՀ է ուղարկվել ուսուցման գործընթացի գնահատման մոտիվացիոն հարցաթերթ՝ անչափահասների ուսումնական կարիքները և առաջարկները ներառելու համար: Մշակվել են ուսումնական թեստեր՝ նրանց գիտելիքները գնահատելու և կրթական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար[45]: Մյուս ծրագիրը վերսկսելու ուղղությամբ աշխատանքներ են տարվել Քրեակատարողական ծառայության և հիմնարկների հետ: Ուսումնասիրվել են հիմնարկների տեխնիկական ռեսուրսները և հեռավար ուսուցման կազմակերպման կարիքները, ինչի արդյունքում «Արմավիր» և «Աբովյան» ՔԿՀ-ներին տրամադրվել են դյուրակիր համակարգիչներ, ուսումնական սենյակներն ապահովվել են համացանցային հասանելիությամբ: Ձեռնարկված աշխատանքների արդյունքում նշված հիմնարկներում

45.Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020-2021 թվականներին հանրակրթությունը կազմակերպվել է «Աբովյան», «Արմավիր», «Նուբարաշեն» և «Սևան» ՔԿՀ-ներում: 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարում հանրակրթական ծրագրում ընդգրկված է եղել 13 անչափահաս:

դասընթացներն առցանց եղանակով վերսկսվել են 2020 թվականի մայիսից: «Կոշ», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում դասընթացները վերսկսվել են նույն թվականի հուլիսից՝ նույնպես առցանց եղանակով[46]: Ծրագրերը դեմ առ դեմ իրականացվելիս պահպանվել է սոցիալական հեռավորություն, ուսուցչական կազմը և ազատազրկված անձինք ապահովվել են անհատական պաշտպանիչ միջոցներով: Ուսուցչական կազմն Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում թեստավորվել կամ պատվաստվել է՝ ներկայացնելով համապատասխան վկայականներ այն ժամանակահատվածում, երբ քրեակատարողական հիմնարկներ մուտքի համար պահանջվել է պատվաստման կամ ՊՇՌ հետազոտության վկայականի առկայությունը:

Մտահոգություն կար, որ ազատազրկված անձինք լուրջ չեն վերաբերվի հեռավար կրթությանը, սակայն նրանք մեծ ոգևորվածությամբ են մասնակցել դասընթացներին: Մեր գնահատմամբ՝ կարողացել են առանց դասապրոցեսի ընդհատման սահուն անցում կատարել հեռավար ուսուցման:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ

Թեստավորումը և պատվաստումը պարտադիր են եղել բոլորի համար: Ուսուցիչները ևս պարտադիր ցույց են տվել վկայականները: Մինչև չեն ներկայացրել, չենք թույլատրել, որ ներս մտնեն: Կանայք նախընտրել են, որ դասընթացները նորմալ ռեժիմով անցկացվեն, քանի որ օնլայն դժվար էր: Սակայն հեռավար ծրագրերը դրական են ազդել, քանի որ դա կանանց համար շփման միակ միջոցն էր:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Լավ էր: Բոլոր դասերին հեռավար մասնակցել ենք: Գոնե ժամանակն անցնում էր:

Կին դատապարտյալ, կանանց տեղամասի մասնաշենք

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ դատապարտյալների ինքնագործ միավորումների

46.Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականին «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագիրն իրականացվել է «Արմավիր», «Կոշ» , «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում, որին մասնակցել է 158 ազատազրկված անձ: «Աբովյան» ՔԿՀ-ում «Համակարգչային հմտություններ», «Օտար լեզու/անգլերեն», «Դեկորատիվ կիրառական արվեստ/վիտրաժ, խեցեգործություն, բատիկա» և «Բիզնես գրագիտություն» թեմաներով դասընթացներին մասնակցել է 25 կին: 2021 թվականին նշված ծրագիրն իրականացվել է «Արմավիր», «Երևան-Կենտրոն», «Կոշ», «Նուբարաշեն» և «Սևան» ՔԿՀ-ներում, որին մասնակցել է 130 ազատազրկված անձ: «Աբովյան» ՔԿՀ-ում «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու/անգլերեն», «Ընտանեկան բռնության կանխարգելում/հույզերի կառավարում» և «Վարսավիրական հմտություններ» թեմաներով դասընթացներին մասնակցել է 14 կին:

և արհեստագործական սենյակների գործունեությունը, ինչպես նաև վերասոցիալականացման մյուս միջոցառումների կազմակերպումը ժամանակավորապես դադարեցվել է՝ շփումները նվազեցնելու և այդպիսով քրեակատարողական հիմնարկներ համավարակի հնարավոր ներթափանցումը կանխելու համար: Դրանց վերսկսումից հետո պահպանվել են հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը[47]: Ազատազրկված անձանց տրամադրվել են անհատական պաշտպանիչ միջոցներ, պահպանվել է սոցիալական հեռավորություն: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում վերասոցիալականացման միջոցառումները դադարեցվել և վերսկսվել են նույն սկզբունքով[48]:

Միջոցառումների ժամանակ դատապարտյալները դիմակներ կրել են, քանի որ 1 ընդհանուր սենյակում են հավաքվել:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ կանանց տեղամասի մասնաշենքում տեղակայված ուսումնական սենյակը բարվոք վիճակում է, համալրված է անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով: Մեկուսարանի մասնաշենքի ուսումնական սենյակը նույնպես համալրված էր անհրաժեշտ գույքով, սակայն նկատել ենք վերանորոգում կատարելու կարիք: Դպրոցի մասնաշենքում նկատել ենք հիմնանորոգման և մաքրման աշխատանքներ կատարելու, դասասենյակներն ուսումնական պարագաներով և նյութերով համալրելու անհրաժեշտություն:
Ազատազրկված կանայք և անչափահասները մեզ հետ զրույցում գոհունակությամբ են խոսել կրթական ծրագրերը հեռավար կազմակերպելու մասին՝ նշելով, որ դրանք լրացրել են կենդանի շփման բացակայությունը: Սակայն մտահոգիչ է այն, որ կրթական ծրագրերում չեն ընդգրկվել կալանավորված և մեկուսարանի մասնաշենքում պատիժ

47.Վերասոցիալականացման միջոցառումների կազմակերպման ժամանակ քրեակատարողական հիմնարկների վարչակազմն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշմամբ, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով սահմանված դրույթներով:

48.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականին «Աբովյան» ՔԿՀ-ում գործել է 1 մարզական, 1 լուսավորչական և 1 մշակութային ինքնագործ միավորում, որին անդամակցել է համապատասխանաբար 7, 5 և 11 դատապարտյալ: 2021 թվականին գործել է 1 մարզական, 1 լուսավորչական և 1 մշակութային ինքնագործ միավորում, որին անդամակցել է համապատասխանաբար 6, 4 և 8 դատապարտյալ: Նշված թվականներին հիմնարկում ինքնագործ կրոնական միավորումներ չեն գործել:

կրող կանայք, իսկ վերասոցիալականացման միջոցառումներում՝ անչափահասները: Բացի այդ, մանկահասակ երեխաների համար չի ապահովվել տարիքային զարգացմանը համապատասխանող միջավայր և ժամանցի միջոցներ: Նշվածից բխում է, որ ազատազրկված կանանցից և անչափահասներից շատերի միակ զբաղմունքը համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ զբոսանքն էր, ինչից նրանք ոչ միշտ են օգտվել:

Առավոտից իրիկուն խցում նստած ենք: Հեռուստացույցն էլ 4 ալիք է բռնում: Համավարակի ժամանակ առօրյան անցել է նույն ձևով՝ միապաղաղ՝ միայն սահմանափակումները պահելով:

Կալանավորված կին, մեկուսարանի մասնաշենք

Մարզասրահից և գրադարանից օգտվելը

Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված անձինք երկրում արտակարգ դրություն, ապա կարանտին հայտարարելու ժամանակահատվածում գրադարանից և մարզասրահից օգտվել են յուրաքանչյուր հիմնարկի՝ օրվա կանոնակարգով սահմանված ժամկետներում և կարգով՝ խստագույնս պահպանելով հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը: Նշված տարածքներն ախտահանվել են սահմանված կարգով և նյութերով: Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ կանանց տեղամասի մասնաշենքում տեղակայված գրադարանը բարվոք վիճակում է: Սակայն գրադարանավարի աշխատանքը կատարող դատապարտյալի՝ պայմանական վաղաժամկետ ազատվելուց հետո հաստիքը թափուր է մնացել: Մեկուսարանի մասնաշենքում գրադարան առկա չէ, փոխարենը հոգեբանի սենյակում տեղադրված է գրքերով լի 1 գրապահարան: Գրադարանավարի գործառույթը կատարում են հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցները: Կանանց տեղամասի մասնաշենքում տեղակայված մարզասրահը նույնպես բարվոք վիճակում է: Այնինչ արձանագրել ենք, որ մեկուսարանի մասնաշենքի մարզասենյակում օդը հեղձուցիչ է, պատերի և առաստաղի ծեփամածիկը տեղ-տեղ թափված է, ինչի պատճառը խոնավությունը և օդափոխության բացակայությունն է: Մշտադիտարկման այցի

ժամանակ տեղեկացել ենք, որ ոչ բոլոր կանայք և անչափահասներն են օգտվում գրադարանից և մարզասրահից, ինչի պատճառը կարող է լինել նշված տարածքների շենքային և սանիտարահիգիենիկ ոչ բավարար վիճակը, գրքերի և մարզասարքերի սակավությունը, որոշ մարզասարքերի անսարքությունը: Նշվածից բխում է, որ ազատազրկված կանայք և անչափահասները համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ ևս չեն ապահովվել զբաղվածության և ֆիզիկական ակտիվության բավարար միջոցներով:

Միշտ վատ պայմաններ ենք արձանագրել հիմնարկի մարզասրահում: Կանայք և անչափահասները նշել են, որ չեն օգտվում մարզասրահից, քանի որ սարքերը պիտանի չեն գործածման համար: Դրանց մեծ մասը սարքին չէ, կոտրված կամ վնասված է:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ

Ինքնավնասում կատարելու և հացադուլ հայտարարելու դեպքերը

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ ազատազրկված անձանց շրջանում համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների պատճառով զանգվածային անհնազանդության, բողոքի, հացադուլի, ինքնավնասումների կամ փախուստի դեպքեր չեն արձանագրվել: Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 1 տղամարդ տեսակցությունների սահմանափակման պատճառով հացադուլ է հայտարարել: Նա տեսակցություն է պահանջել այն դեպքում, երբ ինքը և հարազատները չեն ունեցել ՊՇՌ հետազոտության կամ պատվաստման վկայական, ինչն այդ ժամանակ պարտադիր էր տեսակցությունների տրամադրման համար: Բացատրական և խորհրդատվական աշխատանքների արդյունքում տղամարդը դադարեցրել է հացադուլը: Մշտադիտարկման այցի ժամանակ տեղեկացել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում ևս նմանատիպ դեպքեր չեն արձանագրվել: Մեզ հետ զրույցում կանայք և անչափահասները նշել են, որ ըմբռնումով են վերաբերվել սահմանափակումներին, քանի որ չեն ցանկացել, որպեսզի համավարակը ներթափանցի հիմնարկ: Սակայն տեղեկացել ենք, որ համավարակի տարածման սկզբնական շրջանում

կանայք ակնկալել են, որ ստեղծված իրավիճակի պատճառով իրենց խափանման միջոցները կամ պատժատեսակները կվերանայվեն, հետևաբար հացադուլ հայտարարելու վերաբերյալ դիմումներ են ներկայացրել հիմնարկի վարչակազմին, սակայն բացատրական և խորհրդատվական աշխատանքների արդյունքում հացադուլի դեպքերը կանխվել են:

Վարակվելու և վարակի տարածման հավանականությունը շատ մեծ էր: Կանայք շահագրգռված են եղել, որ հիմնարկում որևէ մեկը չվարակվի: Մենք ևս խուսափել ենք ընդունելություններ կատարելուց, իսկ ընդունելությունների ժամանակ պահպանել ենք բոլոր կանոնները՝ ձեռնոց, դիմակ, հեռավորություն, ախտահանում:

Քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ

Մտածել են՝ բողոքներով հնարավոր է հասնել խափանման միջոցի փոփոխության: Դատարան դիմումներ են գրել, որ այս կամ այն հիվանդությունն ունեն, որպեսզի իրենց տուն թողնեն: Բոլորին թվացել է, թե շուտով դուրս կգան: Համավարակի տարածման սկզբնական շրջանում շատ ծանրաբեռնված էր մեր աշխատանքը հատկապես մեկուսարանում: Առավոտից այնտեղ ենք եղել:

«Աբովյան» ՔԿՀ-ի ներկայացուցիչ

Ամեն րոպե մտավախություն կար, որ հնարավոր է՝ մենք էլ վարակվենք: Առաջինը մեզ համար ենք անհանգստացել, որ մեր վիճակը նորմալ լինի, որպեսզի կարողանանք հասնենք մեր ընտանիքներին: Սահմանափակումները մեր ապահովության համար էին: Գիտակցաբար ենք մոտեցել հարցին: Դրսում էլ էր էդպես: Մտածել ենք՝ կարևորն էն ա, որ կորոնա չընկնենք, չվարակվենք: Ավելի լավ ա սահմանափակումներ լինեն, քան թե վիրուսը ներսում տարածվի: Պաշտպանվել ենք, դիմակներ ենք կրել, ձեռքերն ախտահանել ենք: Ճիշտ է, շատ դժվար էր, բայց կարողացանք հաղթահարել:

Կին դատապարտյալ, կանանց տեղամասի մասնաշենք

Կարգապահական տույժի և խրախուսանքի միջոցները

Ազատազրկված անձանց նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցները երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում կիրառվել են քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի պա-

հանջներին համապատասխան[49]: Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ ազատազրկված անձանց համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումները խախտելու հիմքով կարգապահական տույժի ենթարկելու դեպքեր չեն արձանագրվել[50]: Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ պատժախուց տեղափոխելու ձևով կարգապահական տույժ կիրառելու դեպքում պատժախուցն ախտահանվել է, ազատազրկված անձինք անցել են բժշկական զննություն, իսկ աշխատակիցների հետ ընդունելությունները կազմակերպվել են դիմակներով և ձեռնոցներով՝ պահպանելով սոցիալական հեռավորություն: Մշտադիտարկման այցի ժամանակ արձանագրել ենք, որ կանանց և անչափահասների համար նախատեսված է 1 պատժախուց, որը տեղակայված է մեկուսարանի մասնաշենքում: Նաև արձանագրել ենք, որ խցի և սանհանգույցի վիճակն անմխիթար է: Դրանց հատակը բետոնից է, խոնավության պատճառով պատերն ու առաստաղը բորբոսնած են: Ազատազրկված անչափահասներին և կանանց, այդ թվում՝ հղիներին, մայրերին և իրենց մանկահասակ երեխաներին համավարակի ժամանակ նման պայմաններում բնակեցնելը մտահոգիչ է ոչ միայն առողջության պահպանման, այլև անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից:

Քրեակատարողական հիմնարկների վերահսկողությունը և մշտադիտարկումը

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ վերահսկողությունը երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում կատարվել է փաստաթղթային եղանակով: Հնարավորինս սահմանափակվել են Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների

49.«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, գլուխներ 25 և 26: Որոշումն ուժը կորցրել է 2023 թվականի ապրիլի 24-ին:

50.Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 և 2021 թվականներին ազատազրկված կանայք և անչափահասները խրախուսանքի չեն արժանացել, այն դեպքում, երբ 2020 թվականին նրանց նկատմամբ կիրառվել է 31 տույժ, որից 27-ը՝ նկատողություն, 1-ը՝ խիստ նկատողություն, 3-ը՝ պատժախուց, իսկ 2021 թվականին՝ 7 տույժ, որից 3-ը՝ նկատողություն, 4-ը՝ պատժախուց:

կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների այցերը քրեակատարողական հիմնարկներ: Վերջիններիս հետ կապն ապահովվել է հեռախոսի միջոցով: Դատախազական ստուգումները վերսկսվել են այն ժամանակ, երբ ազգային առողջապահական համակարգում համավարակով պայմանավորված սահմանափակումները մեղմացել են[51]: Համավարակի տարածման սկզբնական շրջանում Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության կողմից քրեակատարողական հիմնարկների մշտադիտարկման աշխատանքները կատարվել են գրավոր ընթացակարգով և հեռախոսակապի միջոցով: Այցերը վերսկսվել են ազգային առողջապահական համակարգում համավարակով պայմանավորված սահմանափակումների մեղմացմանը զուգընթաց: Վարչության աշխատակիցների համար ձեռք են բերվել անհատական պաշտպանիչ միջոցներ, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ դրանց կրման, ձեռքերի ախտահանման, կենցաղային աղբի նետման և այլ թեմաներով[52]: Հասարակական դիտորդների խմբի համար անցկացվել է «Քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկման աշխատանքների իրականացումը նոր կորոնավիրուսային վարակի պայմաններում» թեմայով հեռավար դասընթաց: Դիտորդներին տրամադրվել են անհատական պաշտպանիչ միջոցներ և ախտահանող նյութեր: Բացի այդ, ոլորտային մասնագետների հետ համագործակցությամբ կատարվել է քրեակատարողական հիմնարկներում համավարակի մոդելավորման աշխատանք[53]: Մտահոգիչ է այն, որ համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ հնարավոր խախտումներն ուսումնասիրելու նպատակով նշված կառույցների կողմից «Աբովյան» ՔԿՀ այցեր չեն

51.Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 և 2021 թվականներին քրեակատարողական հիմնարկներում իրականացվել է համապատասխանաբար 51 և 59 ստուգում և ուսումնասիրություն, որոնց արդյունքում հայտնաբերվել է համապատասխանաբար 21 և 109 խախտում: Քանի որ Գլխավոր դատախազությունում ամփոփված տվյալներ չկան, տեղեկություն չի տրամադրվել այն մասին, թե ըստ քրեակատարողական հիմնարկների ինչ ստուգումներ և խախտումներ են արձանագրվել:

52.Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականին քրեակատարողական հիմնարկներից ստացվել է 28 գրավոր և 38 բանավոր բողոք, որոնցից 5-ի կապակցությամբ ձեռնարկվել են արագ արձագանքման գործողություններ: 2021 թվականին ստացվել է 6 գրավոր և 17 բանավոր բողոք: Ստացված բողոքների մի մասը վերաբերել է 1-ից ավելի անձանց առողջության պահպանման իրավունքին: Ստացված բողոքներում բարձրացվել են համավարակով պայմանավորված պատվաստումների, ստացիոնար բուժօգնության, լաբորատոր-գործիքային հետազոտությունների, ՊՇՌ հետազոտությունների և բուժօգնության կազմակերպման հետ կապված հարցեր:

53.Հասարակական դիտորդների խմբի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 և 2021 թվականներին ազատազրկված անձանցից կորոնավիրուսային հիվանդության վերաբերյալ 1-ական ահազանգեր են ստացվել: Գրավոր դիմումներ չեն ստացվել:

կատարվել, ինչը կարևոր է կանանց և անչափահասների իրավունքների պաշտպանության ապահովման տեսանկյունից:

Աջակցությունն ազատազրկման վայրերից վերադարձած անձանց

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ այն դատապարտյալները, որոնց պատժի կրման ավարտին մնացել է մինչև 6 ամիս, ազատ արձակվելուց հետո կարող են դիմել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմին[54] և աշխատանքի տեղավորման հարցում սահմանված կարգով աջակցություն ստանալ[55]: Սակայն գրավոր հարցումների միջոցով տեղեկացել ենք, որ մասնագիտական ուսուցման ծրագրերը երկրում արտակարգ դրություն հայտարարելու ժամանակահատվածում չեն իրականացվել: Բացի այդ, համավարակի տարածման սկզբնական շրջանում Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններ այցելելը և հաշվառվելը չի խրախուսվել: Զբաղվածության կարգավորման պետական ծրագրի շրջանակներում աշխատանքի տեղավորված անձանց մասին ըստ սեռի, տարիքի, ընտանեկան կարգավիճակի կամ այլ հիմքերի առանձնացված հաշվառում չի կատարվում, հետևաբար հնարավոր չէ պարզել, թե ազատազրկման վայրից վերադարձած քանի կին է դիմել և տեղավորվել աշխատանքի[56]: Գրավոր հարցումների միջոցով նաև տեղեկացել ենք, որ անձինք ազատ արձակվելուց առաջ չեն իրազեկվել համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրե-

54.2020 թվականին՝ Զբաղվածության պետական գործակալություն, 2021 թվականից՝ Միասնական սոցիալական ծառայություն, Տե՛ս Հղում 4:

55.Ըստ Քրեակատարողական նախկին օրենսգրքի, որն ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ազատազրկման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի ընտրած բնակության վայրի՝ տեղական ինքնակառավարման և զբաղվածության պետական ծառայությանը տեղեկացնում է դատապարտյալի՝ պատժից առաջիկա ազատման, նրա աշխատունակության, կրթության, մասնագիտության, ինչպես նաև բնակարանի առկայության մասին: Ըստ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի՝ ազատազրկման ձևով պատիժ կրող այն անձինք, որոնց պատժի կրման ավարտին մնացել է մինչև 6 ամիս, և որոնք, որպես աշխատանք փնտրող անձ, հաշվառվել են «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմնի կողմից, իրավունք ունեն ընդգրկվել մասնագիտական ուսուցման ծրագրերում:

56.Զբաղվածության կարգավորման պետական ծրագրի շրջանակներում 2020 թվականին աշխատանքի է տեղավորվել քրեակատարողական հիմնարկներից վերադարձած 2, 2021 թվականին՝ 1 անձ, այն դեպքում, երբ 2020 թվականին քրեակատարողական հիմնարկներից ազատ է արձակվել 479 դատապարտյալ, որից 17-ը՝ կին, 2021 թվականին՝ 409 դատապարտյալ, որից 8-ը՝ կին:

րի կամ դրանց դիմելու կարգի մասին, քանի որ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներին նման գործառույթ վերապահված չէ: Քրեակատարողական հիմնարկներից վերադարձած անձինք չեն դիտարկվել որպես հատուկ սոցիալական խումբ, այլ կարող էին դիմել և աջակցություն ստանալ՝ այդ ծրագրերում առկա չափորոշիչներին համապատասխանելու դեպքում: Նրանց համար սոցիալական աջակցության առանձին ծրագիր չի իրականացվել: Նրանք սոցիալական աջակցություն, օրինակ, սննդի փաթեթ կամ կարճաժամկետ նպաստ չեն ստացել նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, քանի որ դա դուրս է վերջինիս գործառույթներից[57]: Ստեղծված իրավիճակն անհամաչափ է ազդել ազատազրկման վայրից վերադարձած կանանց վրա, քանի որ նրանց դեպքում մեծ է գործազրկության, հասարակության կողմից պիտակավորման և աշխատաշուկայում խտրականության ենթարկվելու հավանականությունը: Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ պատժից ազատվող դատապարտյալներին սոցիալական աջակցություն տրամադրելու կարգ նախատեսվել է 2023 թվականին[58], ինչը նշանակում է, որ նշված խմբի անձանց, այդ թվում՝ կանանց կարիքներն անտեսվել են երկրում արտակարգ դրություն, ապա՝ կարանտին հայտարարելու ժամանակահատվածում:

57.«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն 2020 թվականի մայիսի 12-ին դիմել է Արդարադատության նախարարությանը՝ տեղեկացնելով, որ պատրաստ է Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ առաջին անհրաժեշտության սննդի փաթեթներ տրամադրել արտակարգ դրության ժամանակ ազատված կանանց, անչափահասներին և նրանց ընտանիքներին: Պատասխան գրությամբ տեղեկացրել են, որ հնարավոր չէ նրանց մասին տեղեկատվություն տրամադրել՝ պատճառաբանելով, որ դա անձնական տվյալ է:

58.«Պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության ձևը, ծավալն ու տրամադրելու կարգը, ինչպես նաև դատապարտյալին տրամադրվող միանվագ դրամական օգնության չափն ու տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 502-Ն որոշում:

Համավարակի կանխարգելումը Պրոբացիայի ծառայությունում

Պրոբացիայի ծառայության[59] տրամադրած տեղեկատվության համաձայն՝ աշխատակիցների և շահառուների շրջանում կատարվել են համավարակի և դրա կանխարգելմանն ուղղված իրազեկման աշխատանքներ[60]: Այդ մասին պարբերաբար հրապարակումներ են տեղադրվել ծառայության կայքում: Աշխատակիցների համար կազմակերպվել են իրազեկման դասընթացներ, այդ թվում՝ հեռավար տարբերակով[61]: Սակայն մտահոգիչ է այն, որ նրանց համար համավարակին արձագանքման և համավարակի պայմաններում գործառույթների կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության դասընթացներ չեն կազմակերպվել: Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ աշխատակիցները շահառուներին հեռավար խորհրդատվություն են տրամադրել համավարակի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերին դիմելու կարգի վերաբերյալ: Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի հետ համագործակցության շրջանակում տպագրվել են թերթիկներ, որոնք

59.Պրոբացիայի ծառայությունն ապահովում է ազատությունից չզրկելու հետ կապված 3 պատժի կատարում՝ տուգանք, հանրային աշխատանք, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում, և 3 վերահսկողության իրականացում՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող անձանց նկատմամբ, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ, հղի կանանց, մինչև 6 տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժի կրումից ազատված կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ: Բացի այդ, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ խորհրդատվական զեկույցներ է տրամադրում դատարաններին և իրականացնում է վերասոցիալականացման ծրագրեր ու միջոցառումներ: 2021 թվականին ընդունված նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համաձայն՝ Պրոբացիայի ծառայությանը, վերոնշյալ գործառույթներից բացի, վերապահվել է ազատությունից չզրկելու հետ կապված նոր պատիժների՝ օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարման և ազատության սահմանափակման, ինչպես նաև խափանման նոր միջոցների՝ տնային կալանքի և վարչական հսկողության կատարումը, որոշակի վայրեր այցելելու արգելք և հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն անվտանգության միջոցների և իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցի կիրառման ապահովումը:

60.Պրոբացիայի ծառայության աշխատակիցների և շահառուների շրջանում թեստավորման, պատվաստման, վարակվածության և համավարակով պայմանավորված մահվան դեպքերի վերաբերյալ առանձնացված տվյալներ առկա չեն, քանի որ ծառայությանը նման վիճակագրություն վարելու լիազորություն վերապահված չէ:

61.2020 թվականի հունիսի 2-ին «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ և Ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպել է «Կորոնավիրուսի կանխարգելումը և վերահսկողությունը քրեակատարողական հիմնարկներում» թեմայով հեռավար դասընթաց, որին մասնակցել են նաև Պրոբացիայի ծառայության աշխատակիցները: Այն ներառել է թեմաներ համավարակի կանխարգելման, անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման, ձեռքերի հիգիենայի, ախտահանման և վարակիչ թափոնների կառավարման մասին:

տեղեկություն են պարունակել խոցելի խմբերի անձանց սոցիալական, հոգեբանական, իրավական և առողջապահական աջակցություն տրամադրող պետական և ոչ պետական կազմակերպությունների մասին: Պետական կառույցների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում 2020 և 2021 թվականներին ծառայության կողմից աջակցություն է տրամադրվել խոցելի խմբերի շահառուներին՝ կանանց, անչափահասներին, սոցիալապես անապահով, բազմազավակ կամ անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին: Աջակցությունը ներառել է առաջին անհրաժեշտության սնունդ, հագուստ, ախտահանող նյութեր, անհատական պաշտպանիչ միջոցներ, հիգիենայի պարագաներ և գրենական պիտույքներ[62]:

Շահառուների համար իրազեկման դասընթացներ չենք կազմակերպել: Ինչ իմացել ենք, իրենց տեղեկացրել ենք: Շահառուների համար Պրոբացիայի ծառայությունն ինքնին իրազեկման վայր է: Բացի այդ, խմբային չէինք կարող հավաքվել: Բայց շահառուների իրազեկվածությունը բարձր է: Բոլորն ունեն հեռուստացույց:

Պրոբացիայի ծառայության ներկայացուցիչ

Ըստ Պրոբացիայի ծառայության տրամադրած տեղեկատվության՝ զեկույց կազմելու նպատակով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացված դատապարտյալների հետ հանդիպումները 2020 և 2021 թվականներին տեսազանգի միջոցով են կազմակերպվել: Բացի այդ, համավարակի տարածման սկզբնական շրջանում դադարեցվել է շահառուների ընդունելությունը: Նրանց վերահսկողությունը և տուժողների հետ կապն ապահովվել է հեռախոսի միջոցով: Տնայցերը կատարվել են խիստ անհրաժեշտության դեպքում: Շահառուների ընդունելությունը վերսկսվել է ազգային առողջապահական համակարգում համավարակով պայմանավորված սահմանափակումների մեղմացմանը զուգահեռ: Այդ նպատակով Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի առաջին հարկում սենյակ է առանձնացվել, որտեղ միմյանցից 1,5 մետր հեռավորության վրա սեղաններ են տեղադրվել: Ընդունելությունը կատարվել է անհատական սկզբունքով՝ պահպանելով շահառուների և աշխատակիցների միջև սոցիալական հեռավորությունը: Նրանց

62.«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ 2020 թվականի հունիսի 8-ին առաջին անհրաժեշտության սննդի փաթեթներ է տրամադրել Պրոբացիայի ծառայության Կոտայքի մարզային մարմնում հաշվառված և փորձաշրջանի մեջ գտնվող 5 կին և 3 անչափահաս շահառուի ընտանիքներին:

տրամադրվել են անհատական պաշտպանիչ միջոցներ, կատարվել է ձեռքերի ախտահանում:

Մենք պատիժ կատարող հիմնարկ ենք, չենք կարող տնից աշխատել: Չենք կարող անձնական գործերը տանել տուն: Բացի այդ, անընդհատ զանգում ենք, արձանագրություն ենք կազմում, դատարանից կամ դատախազությունից գրություններ ենք ստանում: Հնարավոր չէ հեռավար աշխատել: Այն աշխատողն է մնացել տանը, ով վարակվել է: Համավարակի տարածման սկզբնական շրջանում հեռախոսով ենք արձանագրություն գրել: Շահառուների հետ հեռախոսով ենք զրուցել, հասկացել՝ ինչով է զբաղվում: Երբ համավարակը նահանջեց, սկսեցինք կանչել: Առաջին հարկում իրարից հեռու սեղաններ ենք դրել և ընդունել՝ կանոնների պահպանմամբ: Տուժողի հետ կապը ևս հեռախոսով է ապահովվել: Տնայցեր կատարել ենք, երբ այլ տարբերակ չի եղել:

Պրոբացիայի ծառայության ներկայացուցիչ

Ուսումնասիրության ժամանակ պարզել ենք, որ Պրոբացիայի ծառայության կողմից տուգանք և հանրային աշխատանքներ պատիժների կատարումը համավարակի տարածման սկզբնական շրջանում հետաձգվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահառուներից շատերը համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների պատճառով զրկվել են աշխատանքից: Ավելին, ստեղծված իրավիճակը դիտարկվել է որպես մեղմացուցիչ հանգամանք, և Պրոբացիայի ծառայության կողմից պատժի խստացման վերաբերյալ միջնորդություններ չեն ներկայացվել:

Տուգանք նշանակելը պրոբլեմատիկ էր համավարակի ժամանակ: Մարդն ինչպե՞ս պետք է աշխատի, որ վճարի: Դրա համար շատերն ասել են՝ ավելի լավ է ազատազրկում տաք, քան թե տուգանք, որովհետև, միևնույն է, չենք կարողանալու վճարել: Տուգանքը փոխվելու է հանրային աշխատանքի, դա չեն անելու: Հանրայինի նկատմամբ կարծրատիպային վերաբերմունք կա: Ասում են՝ ինձ չի սազում, որ ձրի աշխատեմ: Ծառայության պետն Արդարադատության նախարարության հետ քննարկել է, բոլոր դատավորների հետ խոսել է, 2-3 ամսով հետաձգվել է տուգանքների վճարումը: Պրոբացիայի ծառայությունը հանրային աշխատանքի կամ ազատազրկման չի միջնորդել, այլ նրանց վճարելու հնարավորություն է տվել: Հենց սկսել են աշխատել, վճարել են: Հանրայինի դեպքում օրերի հաշվարկը կատարել ենք տվյալ գործատուի աշխատելու պահից: Մենք տեսել ենք, որ օբյեկտիվ հանգամանքներով է պայմանավորված շահառուի չաշխատելը, հետևաբար ազատազրկման չենք միջնորդել: Եթե գործատուն աշխատանքն ամբողջությամբ չի դադարեցրել, շահառուն այլ աշխատանք է կատարել: Օրինակ, եթե աշխատել է որպես մատուցող, բայց այդ աշխատանքը հնարավոր չի եղել կատարել, գործատուն ընդգրկել է բարեկարգման աշխատանքներում, որպեսզի աշխատաժամանակն առաջ գնա:

Պրոբացիայի ծառայության ներկայացուցիչ

Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության» ծրագիրը Պրոբացիայի ծառայությունում դադարեցվել է 2020 թվականի մարտին և վերսկսվել հուլիսին: Այն հեռավար չի կազմակերպվել, քանի որ շահառուները չեն ունեցել համակարգիչներ և համացանցի հասանելիություն: Դասընթացների ժամանակ շահառուներին տրամադրվել են անհատական պաշտպանիչ միջոցներ և ախտահանող նյութեր, պահպանվել են հիգիենայի կանոնները: Ուսումնասիրության ժամանակ տեղեկացել ենք, որ ծրագրի դադարեցումը չի ազդել շահառուների վերասոցիալականացման գործընթացի վրա[63]:

Մենք չենք կարողացել վերասոցիալականացման ծրագրերը քրեակատարողական հիմնարկների նման հեռավար շարունակել, քանի որ շահառուները տանը համակարգիչներ չեն ունեցել: Հարցում ենք կատարել, պարզվել է՝ 1 շահառու համակարգիչ ունի: Մտածել ենք համակարգիչներ բաժանելու ուղղությամբ, սակայն մտավախություն կար, թե ինչպես կպահեն: Հետո այդ բաց թողնված ժամանակը լրացվել է, խտացված ժամաքանակով է դասավանդվել: Դատարանը պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում կարող է վերասոցիալականացման ծրագրերում ընդգրկվելու պարտավորություն դնել: Նման պարտականություն հիմնականում 1 տարով է դրվում: Եթե դասընթացները 2 ամսով դադարեցվել են, ապա դա չի խանգարել շահառուների վերասոցիալականացման գործընթացին:

Պրոբացիայի ծառայության ներկայացուցիչ

Ուսումնասիրության ժամանակ նաև պարզել ենք, որ համավարակի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումներն անհամաչափ են ազդել կին շահառուների վրա՝ հանգեցնելով գործազրկության և սոցիալական վիճակի վատթարացմանը: Դա իր հերթին խնդիրներ է առաջացրել պատիժների կրման և առողջապահական ծառայությունների հասանելիության, կենցաղի ապահովման հետ կապված և մի շարք այլ հարցերում: Նրանք առերեսվել են քաղաքացիական հիվանդանոցների հասանելիության, բժիշկների ծանրաբեռնվածության, տրանսպորտային միջոցների մատչելիության և ֆինանսական ռեսուրսների սակավության հետ կապված խնդիրների: Ստեղծված իրավիճակն անհամաչափ է ազդել նաև նրանց հոգեբա-

63.Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագրին Պրոբացիայի ծառայությունում 2020 թվականին մասնակցել է 55, 2021 թվականին՝ 13 շահառու:

նական վիճակի վրա, քանի որ աճել են ընտանիքի անդամների միջև լարվածությունը և կոնֆլիկտները:

Քանի որ տեղաշարժը սահմանափակվել էր, բոլորը տանն էին, ընտանիքների ներսում լարվածություն է եղել: Կոնֆլիկտներ են եղել ամուսինների, երեխաների հետ, հարս-կիսուր հարաբերություններում: Խնդիրը սուր է արտահայտվել հատկապես բազմանդամ ընտանիքներում: Հոգեբանական խորհրդատվություն ենք տրամադրել, անհատական ընդունելություններ ենք կազմակերպել մեր դահլիճում, որտեղ սոցիալական հեռավորությունը հնարավոր էր պահպանել:

Պրոբացիայի ծառայության ներկայացուցիչ

47 տարեկան եմ: Նախկինում դատվածություն չեմ ունեցել: 2022 թվականի փետրվարին տուգանք է նշանակվել: 10 ամսվա ընթացքում 500,000 դրամ պետք է վճարեմ, ամեն ամիս՝ 50,000 դրամ: Կայուն աշխատանք չունեմ: Տարբեր գործեր եմ անում տուն եմ մաքրում, բուրդ եմ լվանում, վերմակ եմ կարում: Էդպես գումար եմ աշխատում, հավաքում եմ, վարձ տալիս: 15,000 դրամ է: Չեմ հասցնում վճարել: Լինում է՝ եղբայրս է օգնում: Ես ընտանիք չունեմ, մենակ եմ ապրում վարձով: Դաչա է, որի հողամասում պտղատու ծառեր կան: Ես եմ ջրում, խնամում: Սեփականատերը թույլատրել է՝ ապրեմ, բերքից օգտվեմ: Կորոնավիրուսի ժամանակ համարյա սոված եմ մնացել, հարևաններն ու եղբայրս են օգնել: Վարձից բացի կոմունալ վճարներ էլ կան՝ հոսանք, ջուր: Իրար հետ հասնում է 20,000 դրամի: Հետո մտնում ես խանութ, հաց կամ այլ բան ես առնում, 1500 դրամ ծախսվում է: Չեմ հասցնում: Տուգանքն էլ չեմ կարողանում վճարել: Պրոբացիայում ասել են՝ հնարավոր է փոխեն հանրային աշխատանքի:

Պրոբացիայի կին շահառու, 47 տարեկան

Պատժատեսակը՝ տուգանք (500,000 ՀՀ դրամ)

Ամուսնացած եմ, 3 անչափահաս երեխա ունեմ: Վարձով ենք մնում: Տան մոտ խանութ կար, ես ու մեծ աղջիկս ընդեղ էինք աշխատում: Փող, ուտելու բան էին տալիս: 3 ամիս տան վարձը չտվեցինք, հանեցին: Հիմա ուրիշ տուն ենք վարձել: Վարձը 25,000 էր, բայց տանտերը թանկացրել է, սարքել է 50,000: Չեմ հասցնում: Ուշացնում եմ, տանտերը գալիս, էրեխեքին հանում է տնից: Ամեն ինչ թանկացել է: Հազիվ եմ հասցնում: Ամուսնուս դատեցին, բանտից դուրս գալուց հետո ուրիշի հետ ամուսնացավ: Մնացել եմ մենակ: Օգնող չունեմ, Պրոբացիան է օգնում: Պիտի 300,000 դրամ տուգանք վճարեի: Չեմ կարողացել վճարեմ: Փոխել են հանրայինի: Ժամը 09:30-17:00-ն հանրային աշխատանք եմ անում: Ստեղից հելնում եմ, խանութում 3000 դրամով մաքրություն եմ անում: Կորոնավիրուսի ժամանակ շատ դժվար էր: Էդ աշխատանքն էլ չեմ արել: Տրանսպորտով գնալ-գալը դժվար էր: Մի կերպ 100-200 դրամ ճանապարհի փող էի հետ քցում:

Պրոբացիայի կին շահառու, 44 տարեկան

Պատժատեսակը՝ հանրային աշխատանք

Կորոնայի ժամանակ շատ վատ էր: Առողջական լուրջ խնդիրներ ունեմ՝ առիթմիա, զոբ, շաքար, գլխացավեր: Ծնկներս ցավում են: Անալիզներն ու բուժումը վճարովի են: Կորոնայից հետո բրոնխներս հիվանդացան, շատ ուժեղ հազում էի: Առաջ աման լվացող, դայակ եմ աշխատել, կարողանում եմ շաուրմա սարքել: Կարողանում էի հացի գումարը ստեղծել, ոչ ոքի չէի դիմում: Հիմա ի վիճակի չեմ աշխատել: Մենակ եմ ապրում: Ամուսնալուծվել եմ, հետո ամուսինս մահացել է: Ինձ մարդիկ են օգնում, որ մի կտոր հաց ունենամ ուտեմ: Իմ ընկերներից մեկն էլ տեղ է տվել՝ ապրեմ, մինչև հասկանամ ինչ անեմ: Ծնողներս են գյուղից օգնում: Խնդիրներ շատ ունեմ, բայց երկրի վիճակը հասկանում եմ: Չեմ ուզում գլուխս ծռեմ, օգնություն խնդրեմ: Ուզում եմ բուժվեմ, որ աշխատեմ:

Պրոբացիայի կին շահառու, 36 տարեկան

Պատժատեսակը՝ տուգանք (500,000 ՀՀ դրամ)

Մտահոգիչ է այն, որ համավարակի ժամանակ Պրոբացիայի ծառայության կողմից պատիժների և խափանման միջոցների կատարման, վերահսկողության, վերասոցիալականացման և այլ գործառույթների իրականացման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ և ընթացակարգեր նախատեսված չեն:

Եզրակացություն

Կալանավորված և դատապարտված կանայք քրեական արդարադատության համակարգում արդեն իսկ խոցելի են, քանի որ անուշադրության են մատնվում նրանց՝ սեռով պայմանավորված ներհատուկ կարիքները: Դա կապված է այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են քրեակատարողական հիմնարկի շենքային պայմանները, կանանց քիչ թվաքանակը, զոհայնացման կամ սեռական բռնության ենթարկվելու վտանգը, սոցիալ-հոգեբանական, առողջապահական ծառայությունների և խնամքի ու հիգիենայի միջոցների բացակայությունը կամ ոչ բավարար տրամադրումը, արտաքին աշխարհի ու ընտանիքի անդամների հետ կապի խզումը և այլն: Համավարակի ներթափանցումը կանխելու նպատակով քրեակատարողական հիմնարկներում կիրառված սահմանափակումների ժամանակ ևս կանանց ներհատուկ կարիքներն անտեսվել են, ինչը հանգեցրել է նրանց իրավունքների ոչ համաչափ ապահովմանը:

Արձանագրված խնդիրները վերաբերում են «Աբովյան» ՔԿՀ-ի շենքային և սանիտարահիգիենիկ անմխիթար վիճակին, ինչը մտահոգիչ է ազատազրկված կանանց և անչափահասների, բուժանձնակազմի, հիմնարկի աշխատակիցների, ինչպես նաև համավարակի ժամանակ հիմնարկ այցելած փաստաբանների և քրեական վարույթ իրականացնող մարմինների ներկայացուցիչների, տեսակցության եկած և հանձնուք փոխանցող անձանց առողջության պահպանման և անձնական հիգիենայի ապահովման, ազատազրկված կանանց և անչափահասների դեպքում՝ նաև կենցաղի կազմակերպման տեսանկյունից: Մտահոգության տեղիք են տալիս հիմնարկի աշխատակիցների և բուժանձնակազմի ծանրաբեռնվածության, խրախուսման, աշխատանքի պայմանների, աշխատակիցների դեպքում՝ նաև համավարակին արձագանքման և համավարակի պայմաններում գործառույթների կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության հետ կապված խնդիրները: Իսկ ռապիդ թեստերի և հետազոտությունների անցկացման հաճախականությունը մտահոգության տեղիք է տալիս ազատազրկված կանանց և անչափահասների շրջանում համավարակի ժամանակ վարակիչ և խրոնիկ հիվանդությունների բացահայտման և կանխարգելման տեսանկյունից:

Տեսակցությունների սահմանափակումը բացասաբար է ազդել երեխամայրերի վրա՝ հանգեցնելով ընտանիքների և երեխաների հետ

կապի խաթարմանը, դրանով պայմանավորված՝ հոգեկան վիճակի վատթարացմանը: Հանձնուքների արգելքը և սահմանափակումը բացասաբար են անդրադարձել հղի և իրենց մոտ մանկահասակ երեխաներ ունեցող կանանց վրա, ովքեր ունեցել են մանկական սնունդ, դեղամիջոցներ, անձնական հիգիենայի և խնամքի պարագաներ ստանալու սուղ հնարավորություն: Վերասոցիալականացման միջոցառումների ժամանակավոր դադարեցումը հանգեցրել է մարդկային շփումների կրճատմանը, ինչը ևս բացասական հետևանքներ է ունեցել: Ազատազրկված կանայք և անչափահասները չեն ապահովվել զբաղվածության և ֆիզիկական ակտիվության բավարար միջոցներով: Կալանավորված, բարձր անվտանգության գոտու մեղմ և խիստ, ինչպես նաև միջին անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանայք չեն ընդգրկվել կրթական ծրագրերում, անչափահասները՝ վերասոցիալականացման միջոցառումներում: Իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաները ևս չեն ապահովվել տարիքային զարգացմանը համապատասխանող միջավայրով և ժամանցի միջոցներով: Բավարար պայմաններ չեն ստեղծվել ազատազրկված օտարերկրացի անձանց, այդ թվում՝ կանանց առողջության պահպանման, առողջապահական, հոգեբանական, իրավաբանական ծառայությունների և վերասոցիալականացման միջոցառումների հասանելիության և նվազագույն մարդկային շփման ապահովման համար: Նշված գործոններն անհամաչափ են ազդել ազատազրկված կանանց և անչափահասների հոգեկան առողջության վրա:

Մտահոգիչ է այն, որ չեն դիտարկվել ազատազրկված կանանց և անչափահասներին տրամադրվող անձնական հիգիենայի պարագաների և սննդի չափաբաժինները, ինչպես նաև սննդի կալորիականությունը համավարակի ժամանակ ավելացնելու, նրանց անվճար հեռախոսաքարտեր տրամադրելու, հիմնարկին կից գործող կրպակից գնվող ապրանքների գները մատչելի դարձնելու և գնումներ կատարելու էլեկտրոնային համակարգ ներդնելու, զբոսանքի, լոգանքի կամ մարզասրահից օգվելու տևողությունը երկարացնելու կամ հաճախականությունն ավելացնելու, նրանց մասնակցությունը քննչական և դատավարական գործողություններին համավարակի ժամանակ հեռավար ապահովելու հարցերը:

Կրկնակի խոցելի վիճակում են հայտնվել այն կանայք, ովքեր ազատ են արձակվել քրեակատարողական հիմնարկից կամ հաշվառվել են

Պրոբացիայի ծառայությունում, քանի որ գործազրկությանն ավելացել է խտրականության և բռնության ենթարկվելու հավանականությունը: Նշված գործոնները, զուգորդվելով վերասոցիալականացման ծրագրերի, կացարանի կամ սոցիալական աջակցության տրամադրման բացակայության հետ, այս խմբի կանանց վիճակն անբարենպաստ են դարձրել ազատության մեջ: Նրանք պատշաճ ձևով չեն իրազեկվել համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի կամ դրանց դիմելու կարգի մասին, չեն դիտարկվել որպես այդ ծրագրերի հատուկ սոցիալական խումբ, նրանց համար սոցիալական աջակցության առանձին ծրագրեր չեն իրականացվել: Ինչ վերաբերում է պրոբացիայի կին շահառուներին, ապա նրանք սահմանափակումների պատճառով կորցրել են աշխատանքը՝ հայտնվելով սոցիալական ծանր կացության մեջ: Դա հանգեցրել է ոչ միայն պատիժների՝ տուգանք, հանրային աշխատանք, կրման անհնարինությանը, այլև առողջապահական ծառայությունների անմատչելիությանը: Մտահոգիչ է այն, որ համավարակի ժամանակ Պրոբացիայի ծառայության կողմից պատիժների և խափանման միջոցների կատարման, վերահսկողության, վերասոցիալականացման և այլ գործառույթների իրականացման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ և ընթացակարգեր նախատեսված չեն: Բացի այդ, Պրոբացիայի ծառայության աշխատակիցների համար համավարակին արձագանքման և համավարակի պայմաններում գործառույթների կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության դասընթացներ չեն կազմակերպվել:

Ստեղծված իրավիճակում վտանգվել է նաև կալանավորված և դատապարտված կանանց կյանքի և առողջության իրավունքը, քանի որ հնարավոր խախտումները չեն բացահայտվել և զեկուցվել համավարակի ժամանակ «Աբովյան» ՔԿՀ-ում դատախազական ստուգումներ և մշտադիտարկում չկատարվելու պատճառով:

Առաջարկություններ

Առաջարկություններն ուղղված են Կառավարությանը, Արդարադատության նախարարությանը, Առողջապահության նախարարությանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը, Պրոբացիայի ծառայությանը, «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին, Գլխավոր դատախազությանը, Մարդու իրավունքների պաշտպանին և Հասարակական դիտորդների խմբին:

Դրանք վերաբերում են «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման բուժանձնակազմի և «Աբովյան» ՔԿՀ-ի աշխատակազմի աշխատանքի պայմանների, ազատազրկված կանանց և անչափահասներին տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման, նրանց շրջանում համավարակի կանխարգելման և բուժման, ազատազրկված կանանց և անչափահասների պահման պայմանների, նրանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների, ինչպես նաև Պրոբացիայի ծառայությունում համավարակի կանխարգելման ուղղությամբ իրականացվող գործողությունների բարելավմանը:

- Դիտարկել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման բուժանձնակազմին պարգևավճարներ և հավելավճարներ տրամադրելու, ինչպես նաև աշխատավարձը բարձրացնելու հարցը:
- Ազատազրկված կանանց և անչափահասների բժշկական սպասարկման և օգնության կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ կազմակերպել նրանց համար:
- Դիտարկել ստորաբաժանման բուժքույրերի հաստիքների ավելացման հարցն այնպես, որ հնարավոր լինի մեկուսարանի մասնաշենքում և կանանց տեղամասում զուգահեռ հերթապահություն ապահովել:
- Ստորաբաժանման բժշկական սպասարկման սենյակները վերանորոգել և համալրել նոր գույքով: Այդ սենյակներում ապահովել բավարար սանիտարահիգիենիկ վիճակ՝ դիտարկելով դրանք

սանհանգույցով, հոսող ջրով և լվացարանով համալրելու հարցը:

- Պայմաններ ստեղծել ստորաբաժանման բուժանձնակազմի ընդ-միջման և հանգստի կազմակերպման համար:
- «Աբովյան» ՔԿՀ-ում բժշկական մեկուսացման և արտաքին բժշկական զննության անցկացման համար անհրաժեշտ պայ-մաններ ստեղծել: Բժշկական զննության սենյակը համալրել հա-մապատասխան բժշկական պարագաներով:
- Դիտարկել ազատազրկված անձանց, այդ թվում՝ կանանց և ան-չափահասների շրջանում ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և Հեպատիտ C-ի ռապիդ թեստավորումները քրեակատարողական հիմնարկ յու-րաքանչյուր մուտքի ժամանակ անցկացնելու հարցը՝ յուրաքանչ-յուրի համար պահպանելով 6-ամսյա ժամկետը:
- Ապահովել ազատազրկված կանանց և անչափահասների, իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաների առողջապահական ծառայությունների տրամադրման, այդ թվում ՄԻԱՎ-ի հետազոտության և բուժման անընդհատությունը:
- Հիմնարկում պահվող մանկահասակ երեխաներին իրենց ազա-տազրկված ծնողների հետ առողջապահական մարմինների բու-ժական հաստատություններ ուղեկցելու վերաբերյալ օրենսդրա-կան կարգավորումներ մշակել:
- «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ում ներ-դնել էլեկտրոնային բժշկության և հեռաբժշկության համակարգ: Կենտրոնն ընդգրկել Արմեդ և e-penitentiary համակարգերում:
- Ընդլայնել ազատազրկված օտարերկրացի անձանց տրամադր-վող թարգմանչական ծառայությունների շրջանակը՝ ներառելով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը:
- Դիտարկվել «Աբովյան» ՔԿՀ-ի՝ համավարակի կանխարգելմանն առնչվող գործառույթները պատշաճ կատարած աշխատակիցնե-րին պարգևավճար կամ հավելավճար տրամադրելու կամ նրանց աշխատավարձը բարձրացնելու հարցը:
- Հիմնարկի աշխատակիցների համար մշակել համավարակին արձագանքման և համավարակի պայմաններում գործառույթնե-րի կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության դասընթացներ:
- Հիմնարկի աշխատասենյակները վերանորոգել և համալրել նոր գույքով: Մեկուսարանի մասնաշենքի երկրորդ հարկում հսկիչ-ների համար առանձին աշխատասենյակ նախատեսել: Կանանց

տեղամասի մասնաշենքում աշխատակիցների համար առանձին սանհանգույց նախատեսել: Պայմաններ ստեղծել աշխատակիցների հանգստի և ընդմիջման կազմակերպման համար:

- Հիմնանորոգման աշխատանքներ կատարել՝ բարելավելով մեկուսարանի և կանանց տեղամասի մասնաշենքերի, լոգարանների և սանհանգույցների, կարանտինային խցերի, պատժախցի, քննչական, ուսումնական, տեսակցությունների, տեսակապի, զննության անցկացման սենյակների, դպրոցի շենքի, մարզասենյակների, գրադարանների, զբոսախցերի պայմանները և սանիտարահիգիենիկ վիճակը:
- Դիտարկել հիմնարկում օդափոխության համակարգ տեղադրելու հարցը:
- Դիտարկել մեկուսարանի մասնաշենքում խցերը տաք ջրով ապահովելու հարցը:
- Կանանց տեղամասի մասնաշենքի ճաշարանում լվացվելու հնարավորություն ստեղծել:
- Բարելավել իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաների պահման պայմանները, կառուցել համապատասխան խցեր և կացարաններ՝ ներկառուցված լոգարանով և սանհանգույցով:
- Ազատազրկված կանանց և անչափահասների անձնական հագուստը, իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաների անձնական հագուստը և անկողնային պարագաները լվացքի մեքենայով լվանալու պայմաններ ստեղծել:
- Դիտարկել լվացքի մեքենաների քանակի ավելացման և էլեկտրական չորանոցներ տեղադրելու հարցը:
- Դիտարկել զբոսախցերի և կարանտինային խցերի քանակն ավելացնելու հարցը:
- Առկա զբոսախցերը կահավորել մարզասարքերով, կատարել մաքրման աշխատանքներ, ավելացնել կամ բարելավել առկա ծածկերը:
- Զբոսախցերը համալրել անչափահասների տարիքային զարգացմանը համապատասխանող խաղերով, ֆիզիկական վարժություններով և սպորտով զբաղվելու հարմարանքներով:
- Կարճատև տեսակցության և մանկական սենյակներում լվացվելու և սանհանգույցից օգտվելու հնարավորություն ստեղծել:
- Հանձնուքով փոխանցվող սննդի պահման համար անհրաժեշտ

պայմաններ ստեղծել: Ավելացնել ընդհանուր սառնարանների քանակը:

- Դիտարկել հանձնուքների ընդունման սենյակում ջեռուցման և օդափոխության համակարգ տեղադրելու հարցը:
- Դիտարկել հանձնուք փոխանցող անձանց համար սպասասրահ կառուցելու, այն սանհանգույցով և ջրով ապահովելու հարցը:
- Մասնավոր ընկերության կողմից սննդի պատրաստման և մատակարարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրենսդրական կարգավորումներ և մեխանիզմներ նախատեսել:
- Դիտարկել կալանավորված, բարձր անվտանգության գոտու մեղմ և խիստ, ինչպես նաև միջին անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանանց կրթական ծրագրերում, անչափահասներին՝ վերասոցիալականացման միջոցառումներում ներգրավելու հարցը:
- Իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաների համար տարիքային զարգացմանը համապատասխանող միջավայր և ժամանցի միջոցներ ապահովել: Նրանց համար նախատեսված բակը համալրել տարիքային զարգացմանը համապատասխանող խաղերով կամ ժամանցի այլ միջոցներով:
- Դիտարկել կանանց տեղամասի մասնաշենքում գրադարանավարի հաստիքը համալրելու, մեկուսարանի մասնաշենքում գրադարան և գրադարանավարի հաստիք նախատեսելու հարցը:
- Հիմնարկի մարզասենյակները և գրադարանները համալրել նոր գրքերով և մարզագույքով:
- Դիտարկվել ազատազրկված կանանց և անչափահասների մասնակցությունը քննչական և դատավարական գործողություններին համավարակի ժամանակ հեռավար ապահովելու հարցը:
- Դիտարկել ազատազրկված կանանց և անչափահասներին, իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաներին համավարակի ժամանակ տրամադրվող անձնական հիգիենայի պարագաների և սննդի չափաբաժինները, ինչպես նաև սննդի կալորիականությունը համավարակի ժամանակ ավելացնելու, նրանց անվճար հեռախոսաքարտեր տրամադրելու, հիմնարկին կից գործող կրպակից գնվող ապրանքների գները մատչելի դարձնելու և գնումներ կատարելու էլեկտրոնային համակարգ ներդնելու հարցը:

- Ազատազրկված օտարերկրացի կանանց համար ներդնել համավարակի ժամանակ տեսազանգից և հեռախոսակապից օգտվելու առավել ճկուն մեխանիզմ:
- Դիտարկել համավարակի ժամանակ «Աբովյան» ՔԿՀ-ում դատախազական ստուգումներ և մշտադիտարկում կատարելու հարցը:
- Պրոբացիայի շահառուներին և ազատազրկման վայրերից վերադարձած անձանց համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի և դրանց դիմելու կարգի մասին իրազեկելու մեխանիզմներ մշակել: Նրանց դիտարկել որպես հատուկ սոցիալական խումբ և սոցիալական աջակցության առանձին ծրագրեր նախատեսել:
- Դիտարկել Պրոբացիայի ծառայության աշխատակիցների համար համավարակին արձագանքման և համավարակի պայմաններում գործառույթների կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության դասընթացներ կազմակերպելու հարցը:
- Համավարակի ժամանակ Պրոբացիայի ծառայության կողմից պատիժների և խափանման միջոցների կատարման, վերահսկողության, վերասոցիալականացման և այլ գործառույթների իրականացման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ և ընթացակարգեր նախատեսել:

Հիմնական գրականության ցանկ

Քրեակատարողական օրենսգիրք, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136431

Քրեակատարողական օրենսգիրք, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180958

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 1-ին
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175842

«Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ հիգիենայի պարագաների չափաբաժինները, հանդերձանքի, անկողնային պարագաների չափաբաժինները և դրանց օգտագործման ժամկետները, սննդամթերքի միջին և մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 23-ի թիվ 245-Ն որոշում
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174472

«Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշում
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162406

«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, ուժը կորցրել է 2023 թվականի ապրիլի 27-ին
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143139

«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշում, ուժի մեջ է մտել 2023 թվականի ապրիլի 27-ին
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184684

«ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշում
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145261

«ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ թիվ 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրաման
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172004

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2017 թվականին: Կազմակերպության գործունեության առանցքում ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանությունն է: Այս համատեքստում ուսումնասիրվել են ազատազրկված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրները, նրանց աշխատանքի և կրթության իրավունքի իրացման խոչընդոտները, քրեակատարողական հիմնարկներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումները: Նաև իրականացվել են մի շարք ծրագրեր՝ ուղղված քրեակատարողական հիմնարկների սոցիալական աշխատողների, հոգեբանների և բուժանձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացմանը, ազատազրկված կանանց և պրոբացիայի կին շահառուների հզորացմանը և աշխատանքային հմտությունների բարելավմանը, նրանց նկատմամբ հանրության վերաբերմունքի փոփոխությանը: Կազմակերպությունը նաև զբաղվում է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտներում գենդերային զգայուն քաղաքականության ներդրման, համավարակներին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման ջատագովությամբ:

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Կայք՝ https://prisoninitiatives.am/
Հեռախոս՝ +374 55 155 300